«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ազգագրագետ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ԵՐԵՎԱՆ - 2002

Ներածություն

20-րդ դարի վերջին եւ 21-րդ դարի սկզբում աշխարհում ձեւավորված զարգացման միտումները մշակութային տեսանկյունից առավելապես համահարթեցման տանող գործընթացներ են: Եթե համեմատելու լինենք տնտեսական, քաղաքական ու մշակութային գործոնների առաջնայնությունը, ապա հարկ է նկատել, որ գերակա դերակատարություն եւ նշանակություն է տրվում առավելապես տնտեսական ու քաղաքական գործոններին, իսկ մշակութայինը, կարծես թե ձեռք է բերել լավագույն դեպքում երկրորդական կամ ածանցյալ բնույթ: Խնդիրը բոլորովին էլ այն չէ, որ մշակութային գործոնն իրոք երկրորդական նշանակության գործոն է դարձել, այլ այն, որ դա արտահայտվում է այսօր աշխարհում ազդեցության լծակներ ձեռք բերած հզոր պետությունների քաղաքական վարքում, որոնց կողմից արժեքների թելադրմամբ կամ նույնիսկ պարտադրմամբ անտեսվում եւ արհամարվում է այլոց մշակութային ինքնատիպության պահպանման բնական ձգտումը: Անաչառ դիտարկման դեպքում կարելի է ասել, որ աշխարհում ձեւավորված կոնֆլիկտների մեծ մասը հետեւանք է հզորների կողմից թելադրվող հենց այն գերակայությունների, որոնք անտեսում են ազգային կամ տեղական բնույթի մշակույթների առանձնահատկությունները: Ներկա հակամարտությունների հիմքում ընկած է գլխավորապես արեւմուտքի տնտեսական շահերի գերակայությամբ տարվող քաղաքականության դեմ սեփական ինքնության պահպանման մղումը:

Արեւմտյան քաղաքակրթական արդի իրականությունը իր բնականոն զարգացման եւ սեփական մշակութային հենքի վրա նորույթային նորամուծությունների միջոցով ձեւավորել է իր ինքնությանը բնորոշ քաղաքական, հասարակական, արտադրական, հոգեւոր եւ հումանիտար մշակութային մի այնպիսի համալիր, որը չի վտանգում այդ պետություններում ապրող ժողովուրդների ինքնության պահպանումը եւ թույլ է տալիս դա իրականացնել զարգացման ու առաջընթացի համատեքստում: Սակայն ոչ արեւմտյան ժողովուրդները, որոնք այդ ճանապարհը չեն անցել, արեւմտյան արժեքների ազդեցության հետեւանքում հաճախ կանգնում են ինքնության երկատման եւ վտանգի հիմնահարցի առջեւ[1] :

[1] Բեռլոեվեն Կ., Մշակույթը Realpolitic-ի գործոն, «Տեսակետ» եռամսյա հանդես, 2001, # 7, էջ 15-19:

Այս հիմնահարցի առկայությունը երկար ժամանակ չէր ընկալվում արեւմտյան իրականության կողմից եւ այն դեռեւս շարունակում է անտեսվել արեւմտյան քաղաքականության առաջնահերթություններում: Հատկապես դա բնորոշ է ամերիկյան իրականությանը, որը չունի աշխարհի շատ պետություններին բնորոշ էթնոմշակութային առաջնահերթության հատկանիշը: Սակայն, մշակութային հիմնահարցի նկատմամբ անտարբերության քննադատությունը, հատկապես վերջին տասնամյակում, զգալի է եվրոպական մշակութաբանական եւ քաղաքագիտական մտքում: Այն, որ առանց մշակութային գործոնի հաշվառման քաղաքական եւ տնտեսական գերակայություններով առաջնորդվելը չի բերելու հաջողության, արդեն ,որպես գիտականորեն հիմնավորվող ակնհայտ փաստարկ, գնալով ավելի ու ավելի լայն տարածում է ստանում եվրոպական միջավայրում եւ մուտք է գործում նաեւ հյուսիսամերիկյան միջավայր: Այս տեսության զարգացումը եւ տարածումը բնորոշ է դառնում հատկապես սեփական ազգային մշակութային ինքնության պահպանման հիմնահարցով հետաքրքրվող երկրներին[2]:

Ամերիկյան քաղաքական մշակութաբանության կողմից նույնպես 20-րդ դարի վերջում տարածում ստացած մոտեցման համաձայն, մշակույթը եւ առաջընթացը /հատկապես տնտեսական/ սերտորեն փոխկապակցված են: Այդ տեսության համաձայն, ոչ արեւմտյան մշակույթներից շատերն իրենց ներքին կառուցվածքով հակադրվում են զարգացմանն ու առաջընթացին եւ կարող են քաղաքական տեսանկյունից խոչընդոտող դեր կատարել ամերիկյան քաղաքական ու տնտեսական ազդեցությունն աշխարհում հաստատելու համար: Ուստի, այս տեսության կողմնակիցների կարծիքով, ամերիկյան ազդեցությունը աշխարհում հաստատելու ճանապարհը մշակութային ինքնությունների վերացումն է արեւմտյան արժեքների տարածման միջոցով: Դրա իրականացման փուլերից մեկը տվյալ մշակութային միջավայրի ներսում նոր եւ հին արժեքների միջեւ հակասությունների ձեւավորումն է, որը վտանգում է տվյալ մշակութային միջավայրի սեմանտիկ ընդհանրականությունը, որի միջոցով մշակույթը նրա կրողների միջավայրում ստանում է արժեքային նշանակություն եւ իր կոմունիկատիվ գործառույթից բացի. իրականացնում է ինտեգրատիվ գործառույթ, այսինքն՝ իրականացնում է տվյալ հանրույթի էթնիկ ինքնության վերարտադրությունը:

[2] Ռամոնե Ի. Աշխարհակալության նոր շրջան, «Տեսակետ» եռամսյա հանդես, 2000, # 1, էջ 5-6:

Այն, որ աշխարհում միշտ են ընթացել սերտաճման գործընթացներ տարբեր մշակութային եւ նույնիսկ քաղաքակրթական միջավայրերի միջեւ, պետք է համարել բնական երեւույթ: Նորույթ չէ նաեւ մշակութային էքսպանսիայի գաղափարը: Հենց հայ ժողովրդի պատմության ընթացքում նրա նկատմամբ նման բազմաթիվ փորձեր եղել են եւ, շատ դեպքերում, դրանց դիմակայման միջոցը եղել է մշակութային ինքնամփոփ եւ առանձնակի համակարգի ձեւավորումը:

Ներկայումս, Հայաստանի անկախացմանը հաջորդած ժամանակաշրջանում, մեր առջեւ նորից մշակութային ինքնության պահպանման խնդիրը ձեռք է բերում առաջնային նշանակություն: Անշուշտ, համաշխարհային զարգացումներին ձգտելը արդի իրողությունների պայմաններում առաջնային կարեւորության խնդիր է, քանի որ հետ մնալ դրանցից՝ նշանակում է վտանգել ինքնիշխանությունը եւ դառնալ հետամնաց ու սոցիալապես անապահով երկիր: Ուստի, մշակութային անաղարտության պահպանումը չի կարող լինել մշակութային ինքնության եւ դրա վերարտադրության առանցքային պայման, ինչպես, օրինակ, մի շարք երկրներում է փորձ արվում հասնել դրան «փակ» համակարգի ձեւավորման միջոցով: Մեր խնդիրը ներկայիս զարգացող աշխարհին ինտեգրման համատեքստում մշակութային ինքնության պահպանման սկզբունքների պարզաբանումն է: Սկզբունքներ, որոնք թույլ կտան մի կողմից՝ ինտեգրվել այսօրվա զարգացող աշխարհին, այդ թվում նաեւ նրանց կողմից ստեղծված համամարդկային արժեքների յուրացման միջոցով, մյուս կողմից՝ պահպանել եւ վերարտադրել մեր ազգային ինքնատիպությունը պայմանավորող մշակութային համակարգը:

Մշակութային համակարգը, ինչպես արդեն նշվեց, սերտորեն փոխկապակցված է քաղաքական եւ տնտեսական համակարգերի հետ, ուստի դրանցից որեւէ մեկի փոփոխությունը հանգեցնում է փոփոխությունների նաեւ մյուսներում: Արեւմտյան մշակութային միջավայրում ձեւավորված տնտեսական ու քաղաքական համակարգը տվյալ մշակույթի զարգացման արդյունքն է, ուստի արեւմտյան տնտեսական եւ քաղաքական մոդելների յուրացումը զարգացած երկրներին ինտեգրվելու միջոցով անխուսափելիորեն տանելու է նաեւ մշակութային որոշակի փոփոխությունների: Դրանք չեն կարող վտանգավոր լինել էթնոմշակութային ինքնու-

թյան վերարտադրության տեսանկյունից, եթե ազգային մշակութային համակարգ ներմուծվող արժեքները յուրացվում են հարմարեցման միջոցով, այլ ոչ պարզ ընդօրինակման: Հակառակ դեպքում էթնիկ միջավայրում առաջանում են մշակութային տարբեր միջավայրի տարաժամանակյա-ուղղահայաց /դիախրոն/ եւ համաժամանակյա-հորիզոնական /սինխրոն/ կտրվածքով օտարումներ եւ բախումներ, ինչը թուլացնում է ազգային մշակույթի ինչպես կոմունիկատիվ այնպես էլ ինտեգրատիվ հատկությունները[3], հետեւաբար եւ մշակույթի դերը ազգային ինքնության վերարտադրության գործում:

Հայաստանի անկախացումից հետո մշակութային համակարգի ինքնատիպության պահպանման խնդիրը առաջնային նշանակություն ստացավ, քանի որ խնդիր դրվեց երկրում ձեւավորել նոր տնտեսական եւ քաղաքական այնպիսի համակարգեր, որոնք ծնունդ են արեւմտյան մշակութային միջավայրի: Տնտեսական եւ քաղաքական համակարգի բարեփոխման գործընթացին զուգահեռ ի հայտ եկած նոր երեւույթներն սկսեցին ազդել նաեւ մշակութային, հատկապես՝ նորույթների ձեւավորման գործընթացների վրա: Տնտեսական եւ սոցիալական իրավիճակների փոփոխություններն իրենց հերթին բերեցին հասարակական հեղինակավոր դերերի, դրանք պայմանավորող արժեքների եւ մշակութային նորույթների ձեւավորան գործընթացում առանցքային դերակատար ազգային էլիտայի ու դրա ձեւավորման չափանիշների փոփոխության: Ստեղծվածի հետեւանքում էական փոփոխություններ կատարվեցին նաեւ մշակութային վերարտադրությունը եւ վերարտադրական գործընթացների վերահսկողությունը իրականացնող հասարակական խավերում: Նշվածի հետեւանքով, վերջին տարիներին մեր մշակութային միջավայրում ի հայտ են եկել այնպիսի տարրեր, որոնք մի կողմից, կարծեք թե, արգելակիչ դեր են սկսում խաղալ տնտեսական, քաղաքական առաջընթացի ու զարգացման տեսանկյունից եւ մյուս կողմից՝ մշակույթում թուլացնում են նրա կոմունիկատիվ եւ ինտեգրատիվ գործառույթները: Նշված երկու երեւույթներն էլ չափազանց էական նշանակություն ունեն ազգային անվտանգության տեսանկյունից, քանի որ մի կողմից խոչընդոտում են էթնոսի առանձին միավորների եւ նրա ներկայացուցիչների միջեւ համերաշխության եւ համագործակցության ամրապնդմանը, մյուս կողմից՝ արգելակում են ստեղծագործ հատկանիշներով օժտված անհատների ու շրջանակների դրսեւորմանը եւ իրացմանն ազգային-պետական միջավայրում, այսինքն՝ ստեղծագործ եւ որակյալ մարդկային ներուժի իրացմանն ի նպաստ ազգային-պետական խնդիրների: Այս իրավիճակը հատկապես վտանգավոր է այն առումով, որ նպաստում է ստեղծագործ հատկություններով օժտված մարդկային ներուժի օտարմանը /որը հաճախ ընդունում է դրա ծայրահեղ ձեւը՝ արտագաղթելը/ եւ նրանց ինտեգրմանն այնպիսի օտար միջավայրերին, որոնք պայմաններ եւ հնարավորություն են ստեղծում ստեղծագործ ներուժի դրսեւորման եւ իրացման համար: Այս առումով խնդիրը ստանում է ազգային անվտանգության կարեւորության աստիճան, քանի որ.

. նախ, տեղի է ունենում ազգային կարող ու որակյալ ներուժի կորուստ,

. դրա պատճառով արգելակվում են զարգացման գործընթացները երկրի ներսում,

. նշվածի հետեւանքով Հայաստանի ինտեգրումը զարգացման գործընթացներին նույնպես արգելակվում է, ինչը սպառնում է մեր երկրին հայտնվելու չորրորդական, հինգերորդական կարգի հետամնաց եւ անհեռանկար երկրների շարքում, որը միջազգային հարաբերություններում հանդես է գալիս ոչ թե սուբյեկտի, այլ օբյեկտի դերում՝ անզոր իր ազգային անվտանգությունը ապահովելու առումով:

Ուստի, մշակութային ինքնության եւ վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության հիմնահարցին սերտորեն առնչվող կամ նրա մի բաղադրիչը կազմող խնդիր է: Ներկայացվող հետազոտության մեջ փորձ կարվի մշակութային ինքնության ու վերարտադրության հիմնահարցը քննարկել հենց այս տեսանկյունով: Հետազոտության խնդիրն է լինելու ներկայացնել մշակութային համակարգում ընթացող ներկա գործընթացների բնույթը, դրանց դրական եւ բացասական տեսանկյունները եւ զարգացման ու ազգային անվտանգության տեսանկյունից մշակութային քաղաքականության առանցքային սկզբունքները:

---

[3] Մշակույթի կոմունիկատիվ եւ ինտեգրատիվ հատկությունների վերաբերյալ տեսական մոտեցումների մասին տես՝ Radcliff-Brown A., Method in Social Anthtropology, Bombey, 1960, p. 23-34. Bidney D., Teoretical Anthropology, N.Y., 1953, pp. 80-84.

1. Սոցիալ-տնտեսական եւ քաղաքական արդի գործընթացների ազդեցությունը մշակութային համակարգի վրա

Մշակութային ադապտացիան տնտեսության անցումային փուլում: Հայաստանի անկախացումը, մեր կարծիքով, պետք է գնահատել որպես գործընթաց, որը դեռեւս չի ավարտվել: Բնականաբար, այն ընթանում է տնտեսական ու քաղաքական համակարգի էական վերափոխումներով: Տնտեսության ձեւավորման ներկա փուլը պայմանականորեն կարելի է անվանել ընդունված ձևով անցումային փուլ:

Հետազոտության այս հատվածում փորձ կարվի քննարկել հասարակական համագործակցությունը պայմանավորող մշակութային համակարգի վրա տնտեսական ոլորտում կատարվող փոփոխությունների ազդեցությանը վերաբերող հիմնահարցեր[4]: Կարեւոր է նկատի ունենալ, որ խոսքը չի վերաբերելու տնտեսության անցումային փուլի դրական կամ բացասական առումներին եւ գնահատականներին զուտ տնտեսագիտության տեսանկյունից: Կփորձենք դիտարկել մշակութային ադապտացիայի խնդիրները, դրանց արդեն գոյություն ունեցող հետեւանքները ու սպասվելիք հնարավոր ազդեցությունը հասարակական համագործակցության եւ ներդաշնակ զարգացման վրա: Այս հետազոտության առանձնահատկությունից ելնելով՝ կբավարարվենք առաջադրված խնդրի ընդհանուր գծերը եւ զարգացման միտումները ներկայացնելով:

Տնտեսական նախկին համակարգից նորին անցումը Հայաստանում, փաստորեն, ուղեկցվեց ոչ թե աստիճանական բարեփոխումների ճանապարհով, այլ կտրուկ՝ «շոկային» մեթոդներով, որն ունեցավ ավելի շատ դեստրուկտիվ հետեւանքներ: Հին համակարգի քանդումը, չուղեկցվելով նորի ստեղծման համարժեք տեմպերով ու քայլերով, հանգեցրեց նրան, որ Հայաստանը վերածվեց բնակչության կենսապահովման պահանջարկը գլխավորապես արտասահմանյան նորամուծություններով բավարարող երկրի: Մյուս կողմից, աշխատունակ բնակչությունը զրկվեց աշխատելու եւ իր նյութական ու հոգեւոր պահանջմունքների բավարարմանն անհրաժեշտ եկամուտ ստանալու հնարավորությունից: Նշվածը թողեց երեք հիմնական հետեւանք՝ ա. աշխատունակ բնակչության, հատկապես որակյալ աշխատուժի արտահոսք, բ. բնակչության ազատ աշխատուժի ներգրավումը ներմուծմամբ զբաղվող մոնոպոլիզացված առեւտրի ոլորտ, գ. Հայաստանը վերածվեց էժան աշխատուժի երկրի:

Առաջին՝ որակյալ աշխատուժի արտահոսքը մի կողմից կտրուկ գցեց մշակութային նորույթների պահանջն իր ներուժով բավարարելու ընդունակությունը ,եւ մյուս կողմից՝՝ թուլացրեց հասարակության դիմադրողականությունը արտաքին մշակութային «ինտերվենցիայի» նկատմամբ:

Երկրորդ՝ ազատ աշխատուժի գլխավորապես ներմուծվող ապրանքների մանր առեւտրով զբաղվածությունն ուժեղացրեց արտասահմանյան մշակութային նորույթների ներհոսքը եւ ժամանակաշրջանի ռիթմով պայմանավորված մշակութային համակարգի նորույթների պահանջարկի բավարարումը գլխավորապես օտար մշակութային տարրերի ընդօրինակմամբ:

Երրորդ՝ գործազրկության եւ էժան աշխատուժի մեծ ծավալները հանրապետության բնակչության հիմնական մասին վերածելով ցածր գնողունակությամբ էժանագին եւ ցածրորակ ապրանքների առաջարկը բավարարող զանգվածի, ըստ այդմ,, նպաստում են ցածրաճաշակ եւ մշակութային առումով անկատար ու չհղկված մարդկային հանրույթի ձեւավորմանը:

Նշված երեք երեւույթները միմյանց հետ փոխադարձորեն կապված եւ զուգահեռ ընթացող գործընթացներ են: Դրանք դեռ ընթացքի մեջ են եւ արդեն ունեն հասարակության համագործակցության եւ մշակույթի վերարտադրության միտումները պայմանավորող որոշակի ազդեցություն:

Բնակչության արտահոսքի ազդեցությունը հասարակական-մշակութային կյանքում: Արտագաղթի ծավալների վերաբերյալ քանակական իրական տվյալներ ներկայումս չկան: Դրա ծավալների մասին կարելի է խոսել մոտավոր տվյալներով: Միակ քիչ թե շատ հավաստի աղբյուր են համարվում օդանավակայանի գրանցումները, համաձայն որոնց, մեկնածների եւ եկածների թվային տարբերությունը հաշվելով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանը օդային ճանապարհով լքողների թիվը հասնում է շուրջ

[4] Մշակույթի եւ արժեքների տնտեսական հիմքի մասին տես՝ Мангейм К., Человек и общество в эпоху преобразования, Избранное, М., 1994, сс. 305-306. Goldier M., Rationality and Irationality in Economics, N.Y., 1972. Polani K., Primitive, Archaic and Modern Economies, N.Y., 1968.

700 000 մարդու: Ի դեպ, արտագաղթողների կեսից ավելին կազմում են աշխատունակ տարիքի տղամարդիկ, որոնց միջին վաստակը մոտավոր հաշվումներով տատանվում է ամսական 600-1400 ԱՄՆ դոլարի սահմաններում: Արտագաղթողների 55%-ը անհատներ են, մնացած 45%-ը գաղթել են ընտանիքով: Իսկ ընդհանրապես գործունյա ու աշխատունակ տարիքի ներկայացուցիչներն արտագաղթողների մեջ կազմում են 74%, այն դեպքում, երբ նույն սոցիալ-տարիքային խումբը կազմում է Հայաստանի բնակչության 54%-ը, իսկ տղամարդիկ 48%-ը: Մարդկային ներուժի կազմում արտագաղթի պատճառած հետեւանքները հասկանալու համար բերենք մեկ այլ թվային համեմատություն նույնպես: Այն դեպքում, երբ բարձրագույն եւ թերի կրթությամբ անհատները կազմում են Հայաստանի բնակչության 25% արտագաղթողների մեջ նույն խմբի ներկայացուցիչների բաժինը 48% է: Միայն 1991-1996 թթ. ընթացքում արտագաղթի պատճառով Հայաստանը կորցրել է բնական, հումանիտար եւ տեխնիկական կրթությամբ մասնագետների 1/3-ը: Արտագաղթողների մեջ գերակշռող է քաղաքային բնակչությունը՝ 75%, իսկ սոցիալական շերտավորման տեսանկյունից հեռացողների մեծ մասը բաժին է ընկնել միջին շերտին[5]:

Ինչպես արդեն նշվեց, բնակչության արտագաղթի հիմնական պատճառները պայմանավորված են հանրապետության տնտեսական իրավիճակով: Վերը բերված ոչ պաշտոնական վիճակագրական տվյալներից կարելի է հստակորեն պնդել, որ Հյասատանի անկախության ձեռք բերմանը հաջորդած տարիներին երկրից հեռացած բնակչության 1/5 մասը կազմում են մշակութային առումով առաջնային դերակատարության անհատները, որոնց բացակայությունն, անշուշտ, բացասաբար է անդրադարձել հասարակության մշակութային գործընթացների վրա: Որպեսզի հստակեցնենք մեր ասելիքը, նշենք, որ մշակույթ ասելով նկատի ունենք նյութական, հոգեւոր եւ սոցիոնորմատիվ բնույթի դրական եւ բացասական արժեքների ամբողջությունը, որոնք պայմանավորում են հասարակական համագործակցությունը, հաղորդակցումը եւ համերաշխությունը:

Այս առումով Հայաստանից հեռացած որակ ներկայացնող խմբերը կարելի է համարել՝ ա. բարձրագույն եւ թերի բարձրագույն կրթությամբ մասնագետներ, բ. քաղաքային բնակչություն, գ. բնակչության միջին շերտ, դ. որակյալ աշխատուժ, գլխավորապես բարձր որակավորմամբ բարձրագույն կրթությամբ մասնագետներ, արհեստավորներ, շինարարներ, որակավորում ունեցող բանվորներ: Այսինքն,, սրանք այն խմբերն են, որոնք կազմում են գլխավորապես քաղաքային բնակչության միջին շերտը կամ քաղաքային մշակույթի կրողը եւ վերարտադրողը: Իսկ եթե հաշվի առնենք, որ Հայաստանի բնակչության շուրջ 70%-ը կազմում են քաղաքացիները, ապա դժվար չէ հետեւություն անելը, որ բնակչության այս շերտի արտագաղթը բացասաբար է ազդել ոչ միայն քաղաքային մշակույթի, այլեւ հանրապետության մշակութային գործընթացների կայունության եւ որակական հենքի վրա:

Հիմնականում 1992-1996 թթ., ինչպես նաեւ հետագա տարիներին փոխվեց նաեւ Երեւան քաղաքի երիտասարդության կազմը: Քաղաքային մշակույթի նորույթների հոսքը կարգավորող քաղաքաբնակ երիտասարդության արտահոսքը /գլխավորապես Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներից/ ուղեկցվեց դեպի այդ քաղաքներ գյուղական երիտասարդության հոսքով՝ մշտական կամ դրվագային միգրացիաների ձեւով: Նշված տարիներին քաղաքային երիտասարդության կյանքում զգալի ազդեցություն ձեռք բերեց գավառական երիտասարդությունը, որի ամենաբնորոշ հատկանիշը նորույթների նկատմամբ վերաբերմունք ցուցաբերելու, այդ թվում՝ դրանք էթնոմշակութային միջավայրին ադապտացնելու կուլտուրայի բացակայությունն է:

Արդեն խորհրդային ժամանակաշրջանում ուրբանիզացված բնակչության ձեւավորումից ի վեր Հայաստանում նորույթների ներմուծումն սկսվում էր Երեւանից: Բացառված էր, որ գավառային միջավայր նորույթներ մուտք գործեին ուղղակիորեն: Ուստի գավառային ու քաղաքային երիտասարդության միջեւ գոյություն ուներ որոշակի հակադրություն, որի հիմքում էլ ընկած էր նորույթների նկատմամբ քաղաքային կուլտուրայի եւ գավառային անհանդուրժողականության տարաձայնությունը: Գավառային այն երիտասարդությունը, որը համակրում էր նորույթային մշակույթին, անպայման ձգտում էր տեղափոխվել քաղաք, հակառակ դեպքում գավառային հականորութային մշակույթը բացառում էր նրանց ձգտումների դրսեւորման հնարավորությունը: Սակայն, նույնիսկ Երեւան տեղափոխվելու դեպքում գավառցին հստակորեն գիտակցում եւ զբաղեցնում

[5] Մարդկային զարգացման ազգային զեկույց, /այսուհետեւ ՄԶԱԶ/, Հայաստան 1996, Երեւան 1996, էջ 14:

էր իր՝ ընդօրինակողի տեղը, առանց դիմադրության առաջնությունը թողնելով քաղաքային երիտասարդությանը մինչեւ այն պահը, երբ նրա մոտ նորույթների նկատմամբ վերաբերմունքը չէր հղկվում եւ համապատասխանում գոյություն ունեցող կուլտուրային:

Մյուս կողմից՝ նորույթների ընտրության վստահությունը կրող քաղաքային երիտասարդությունը ենթարկվում էր վերահսկողության՝ գլխավորապես քաղաքային միջին շերտը ներկայացնող, հասարակական կշիռ ունեցող սոցիալ-տարիքային մյուս խմբերի կողմից: Մի կողմից, քաղաքային երիտասարդության եւ մյուս կողմից հասարակական համագործակցության եւ հսկողության առումով որակյալ բնակչության արտահոսքը քաղաք տեղափոխված գավառային երիտասարդությանը հնարավորություն տվեց նորույթների ներմուծման գործընթացում ազդեցիկ դիրք գրավել: Ժամանակահատվածի կարճության պատճառով նման իրավիճակում հայտնված երիտասարդությունը ոչ թե փորձեց յուրացնել գոյություն ունեցող մշակութային ադապտացման մշակույթի դրական կողմերը եւ ավանդույթները, այլ լինելով գավառային երիտասարդություն-քաղաքային երիտասարդություն հակադրության կրողը, մերժելով քաղաքային էլիտար երիտասարդության ավանդույթները, սկսեց տարածել մշակութաբանական առումով պարզունակ ու ցածրորակ, ձեւական կամ կերպային ընդօրինակման պրակտիկան:

Սակայն քաղաք տեղափոխված գավառային երիտասարդությունը այս գործընթացում միայնակ չէ: Մշակութային վերահսկողությունը իրականացնող շերտերի արտագաղթը գործունեության դաշտ բացեց որակապես ցածր գործառույթ ունեցող հասարակական խավերի համար: Հատկապես վերջիններիս ներգրավումը փողոցային մանր առեւտրի ոլորտ, ավելի ամրապնդեց սրանց կողմից հասարակական համագործակցության ձեւերի եւ մշակութային արժեքների համակարգմանը մասնակցությունն ու ստերեոտիպիզացումը եւ վերջինիս մոդեռնիզացումը: Եթե հաշվի առնենք, որ այս խավը նույնպես գլխավորապես ուներ գավառային ծագում եւ քաղաք էր տեղափոխվել խորհրդային իշխանության վերջին 10-20 տարիներին եւ սերնդափոխության առումով դեռ պատկանում էր գավառական շերտին, ապա կարելի է ասել, որ Հայաստանում արմատավորվում է հասարակական համագործակցության եւ մշակութային գործընթացների գավառայնացման կամ գավառային ազդեցիկության եւ հսկողության ուժեղացման միտումը: Սա ինքնին վտանգավոր է մշակութային լյումպենիզացիայի տեսանկյունից, քանի որ հասարակության ավանդույթային վերահսկողության գործառույթը կրող հատվածը այսօր հավակնում է նաեւ նորույթների վերահսկողությանը: Այն դեպքում, երբ նա չի ադապտացվել այդ գործառույթին, կոմպետենտ չէ եւ չունի որակյալ ընտրություն կատարելու կարողություն, այսինքն՝ իր հատկանիշներով չի հանդիսանում մշակութային էլիտա ներկայացնող խավ: Ավանդույթային տեսանկյունից այն նույնպես ապամշակութային տարր է, քանի որ լքել է ավանդույթի ազդեցության միջավայրը սերնդափոխության այնպիսի շրջանում, երբ նա դեռ չի դարձել անվանդույթի մշակութային ժառանգորդ եւ ընդամենը դրա ձեւական կրողն է: Եւ բոլորովին պատահական չէ, որ գավառային ծագում ունեցող երիտասարդության այս խավը, ապաշնորհ լինելով նորույթների ներմուծման առումով, օտարվում է նաեւ ավանդույթից՝ թե ազգային, թե մարդկային մշակույթի տեսանկյունից վերածվելով բովանդակազուրկ, ապամշակութային եւ քաղաքային միջավայրում խմբակային կերպային ստերեոտիպեր ձեւավորող ու տարածող զանգվածի:

Այդ պատճառով այսօր Հայաստանը հեղեղված է արեւմտյան ցածրաճաշակ, անորակ, հոգեւոր եւ մշակութային ցածրարժեք նորամուծություններով: Նորույթների նկատմամբ քաղաքային մշակույթը կրող երիտասարդությունն ազդեցիկ չէ եւ նրա գործունեությունն ունի անհատական կամ նեղ խմբային բնույթ՝ գլխավորապես այն պատճառով, որ արտագաղթը Հայաստանից խլել է քաղաքային միջին խավ կազմող, հասարակական գործառնության տեսանկյունից որակյալ բնակչության 1/5-րդ մասին: Նշված խավի մշակութային կրավորացման մյուս պատճառները կքննարկվեն ավելի ուշ:

Մանր առեւտրի ազդեցությունը մշակութային միջավայրի ձեւավորման վրա: Մշակութային կյանքի վերարտադրության կազմակերպումը սերտորեն կապված է հասարակության մեջ աշխատանքի մասնագիտական բաժանման հետ: Որքան աշխատանքի բաժանումը խորն է եւ աստիճանակարգված /դիֆերենցացված/, այնքան ավելի լայն հենք է ստեղծվում մշակույթի հարստացման եւ հասարակական տարբեր մասնագիտական շերտերին համախմբելու համար: Մշակույթի դերը հենց հասարակության բոլոր խավերի համար ընդունելի միջավայրի ձեւավորման մեջ է, որը

նրանց թույլ է տալիս համախմբվելու համընդհանուր արժեքների շուրջ: Իրենց հերթին, մասնագիտորեն տարաբաժանված հասարակության տարբեր խավերը հարստացնում են մշակույթը իրենց ներդրման միջոցով[6]: Միայն հարուստ ու կենսունակ մշակույթը կարող է ապահովել դիֆերենցացված եւ տարաշերտ հասարակության համախմբումը համընդհանուր արժեքների շուրջ:

Խորհրդային ժամանակաշրջանը հայ ժողովուրդը ամփոփեց որպես բավականին զարգացած արտադրական մշակույթ ունեցող ժողովուրդ, որն աչքի էր ընկնում հասարակության մասնագիտական տարաբաժանվածության բարձր աստիճանով: Մշակութային դինամիկ վերարտադրության տեսանկյունից շահեկան իրավիճակը դրա հետագա խորացումն ու կատարելագործումն էր: Այսինքն, Հայաստանի հասարակական-մշակութային միջավայրը անկախության ձեռք բերման շրջանում ուներ այն անհրաժեշտ ներուժը, որը կարող էր նպաստավոր պայմաններ ստեղծել տնտեսության զարգացման համար: Սակայն, տնտեսական ոլորտում բարեփոխումների կազմակերպումը Հայաստանում իրականացվեց առանց դրա մշակութային եւ հասարակական համակարգերի հետ փոխկապվածության հանգամանքի հաշվառման: Տնտեսական նման անհեռատես քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ անկախությունից հետո մասնագիտական բազմազանությամբ աչքի ընկնող հասարակական կառուցվածքում գրանցվեց հետընթաց: Տնտեսության վերակառուցման տարերային գործընթացները հանգեցրին նաեւ դրանց հետ փոխկապակցված տարերայնության՝ հասարակական-մշակութային դաշտում:

1991-1995 թվականների ընթացքում արմատականորեն փոխվեց բնակչության մասնագիտական զբաղվածության կազմը: Հատկապես մշակութային տեսանկյունից բացասական նշանակության փոփոխություն պետք է համարել այն, որ զգալիորեն փոքրացավ այն մասնագիտական շրջանակների քանակը[7], որոնք սովորաբար պետք է ապահովեին միջին խավերի ձեւավորումը: Դրան հակառակ, շատ արագ տեմպով հասարակության մեջ գերակշիռ թիվ կազմեցին մանր առեւտրում ներգրավվածները:

Մանր առեւտուրը Հայաստանում ձեւավորվեց տարերային եղանակով եւ ներգրավեց բնակչության համարյա բոլոր մասնագիտական խմբերի ներկայացուցիչներին: Առեւտրի այս ոլորտի եկամուտները տատանվում են օրական 500-6000 դրամի սահմաններում եւ բավարարում են գլխավորապես սննդի պահանջմունքը՝ չբավականացնելով կենցաղային առաջնային նշանակության այլ ապրանքների պահանջարկը բավարարելուն: Հայաստանում մանր առեւտով զբաղվողները շատ մարզերում, ըստ մեր հետազոտությունների, կազմում են աշխատող բնակչության 70%-ը[8]:

Մանր առեւտրի բնորոշ հատկանիշներից մեկը խոշոր եւ միջին առեւտրից նրա կախվածությունն է: Այն ինքնուրույն չէ եւ հիմնականում զբաղվում է առեւտրի մեծածախ ոլորտների առաջարկի բավարարմամբ: Հայաստանի քաղաքական գործիչներից մեկի դիպուկ արտահայտությամբ, մանր ձեռներեցները դարձել են խոշոր ձեռներեցության գործակատարները: Մանր առեւտրի տեսականին գլխավորապես ներմուծվող ցածրորակ եւ ցածրարժեք ապրանքներն են, բացառությամբ սեզոնային բնույթ ունեցող և Հայաստանում արտադրվող գյուղատնտեսական ապրանքների:

Մանր առեւտրականի տնտեսական խիստ կախվածությունը խոշոր առեւտրականից պարտադրում է նրան, նախ, դառնալ ցածրաճաշակ նորույթների տարածող եւ պրոպագանդող: Երկրորդ լինելով որոշակի սահմանափակ քանակությամբ տեսականի ունեցող ապրանքներ վաճառող, միեւնույն ժամանակ նա մեկ այլ տեսականու ապրանքների վաճառող մանր առեւտրականի սպառող է: Այսինքն, մանր առեւտրականը ցածրորակ եւ էժանագին նորույթների միաժամանակ եւ տարածողը /վաճառող/,, եւ յուրացնողն է /գնորդ/: Այսինքն, Հայաստանի զբաղված բնակչության մեծամասնությունը ներգրավված է միմյանց ներմուծվող ապրանքներ առաջարկելով եւ այդ առաջարկը բավարարելով: Սա նշանակում է, որ բնակչության այդ հատվածը զրկված է մշակութային նախաձեռնության եւ աշխատանքին ստեղծագործական մոտեցման հնարավո-

[6] Манхейм К. Диагноз нашего времени, М., 1994, с. 418.

[7] Հայաստանում մասնագիտական զբաղվածության պատկերի փոփոխման, հասարակական կյանքի ապապրոֆեսիոնալիզացիայի եւ դրա հետեւանքների մասին տեսանկյուններ տես՝ Շաքարյան Հր., Շաքարյան Լ., Պրոֆեսիոնալիզմի էթիկական տեսանկյունները պառլամենտական մտածելակերպում, Երեւան, 1999, էջ 14:

[8] Միհրան Գալստյան, 1996-1999 թթ. դաշտային նյութեր /այսուհետեւ Մ.Գալստյան, Նյութեր/ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի /այսուհետեւ ՀԱԻ/ էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվ:

ությունից: Մեծածախ առեւտրի մոնոպոլիան մանր առեւտրականին առաջարկում է ներմուծվող ապրանքների սահմանափակ տեսականի,, եւ դրա վաճառքն ու սպառումը բնակչության բացարձակ մեծամասնության համար հասարակական տնտեսական համագործակցության գոյություն ունեցող միակ հնարավոր ոլորտն է Հայաստանում: Տնտեսական առումով մշակութային նախաձեռնություն նշանակում է, որ հասարակության անդամին հնարավորություն տրվում իր մասնագիտական գիտելիքների ու ունակությունների սահմաններում մասնակցել պահանջարկ ունեցող ապրանքների արտադրությանը: Նման դեպքերում մեծանում է հասարակական համագործակցության դաշտը, դրանում գոյություն ունեցող ոլորտները եւ համապատասխանաբար՝ ձեւերը: Հասարակական համագործակցության ակտիվացումն ընդլայնում, իսկ բազմազանությունը՝ ոչ միայն հնարավորություն, այլեւ մշակութային արժեք ներկայացնող տարրերի գործառության եւ առաջացման պահանջ է առաջացնում: Եթե մշակութային փաստն ունի գործառույթ, այն ունի նաեւ կյանք եւ վերարտադրվելու հեռանկար: Մշակութային փաստի գործառույթը, կենսունակությունը եւ գոյությունը պայմանավորված է հասարակական համագործակցության ակտիվության աստիճանով: Եթե մարդկանց իրենց համագործակցության մեջ հետաքրքրում է միայն որոշակի գնի սահմաններում որոշակի տեսակի ապրանքների ձեռքբերման եւ վաճառքի հնարավորությունը, նրանք դրանից դուրս այլ ստեղծագործական առաջարկներ ու արժեքներ շահագրգռված չեն փնտրել, քանի որ դրա պահանջած էներգիան մանր առեւտրի շահավետության տեսանկյունից ձեռնտու չէ ծախսել: Եթե զբաղվածության ու մարդու գործունեության տնտեսական առողջ դաշտ ունեցող երկրներում տնտեսական շահը, բացի ապրանք վաճառելուց, ներառում է նաեւ դրա արտադրելու գործընթացը, բնականաբար, բացի առեւտրական համագործակցությունն ապահովող մշակութային արժեքներից, պահանջում է նաեւ արտադրական, ստեղծագործական համագործակցությունը ապահովող մշակութային արժեքներ: Քանի որ Հայաստանին բնորոշ մանրավաճառության մակարդակի առեւտրով կամ մանր ձեռներեցությամբ զբաղված մեծամասնություն կազմող բնակչության տնտեսական համագործակցությունը մշակութային բարձրորակ եւ բազմազան արժեքների պահանջարկ չի ներկայացնում, ուստի այդ արժեքները, աստիճանաբար կորցնելով գործառույթը, դուրս են մղվում մշակութային համակարգից[9]: Մյուս կողմից էլ այդ խավը նյութապես ի վիճակի չէ նման պահանջարկի:

Բնակչության փոքրամասնություն կազմող բարեկեցիկ կյանքով ապրող մարդկանց զբաղվածությունը եւ եկամուտի աղբյուրները նույնպես բազմազան չեն: Դրանք պետական-բյուրոկրատական համակարգի հիմնականում ստվերային եկամուտներով ապրող բարձրաստիճան պաշտոնյաներն են, ինչպես նաեւ ստվերային խոշոր առեւտրով զբաղվողները, որոնք եկամուտների տեսանկյունից նույնպես աշխատանքային զբաղվածության ոչ ստեղծագործ բնույթի պատճառով մշակութային բարձրաճաշակ արժեքների պահանջարկ չեն ներկայացնում, ուստի չունեն նաեւ մշակութանպաստ գործառույթ:

Տնտեսական դրդապատճառներով պայմանավորված ցածրորակ ու էժանագին օտարերկրյա նորամուծությունների օգտագործումն աստիճանաբար սովորույթի ուժ ստանալով, վեր է ածվում հասարակական կիրառության մշակութային տարրի՝ ձեռք բերելով տվյալ հասարակության համագործակցության որակին համապատասխան մշակութային արժեքի կարգավիճակ: Քանի որ հանրապետությունում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ տնտեսական առումով շահավետ չի համարվում, եւ պայմաններ չեն ստեղծվում ապրանքները տեղում արտադրելու համար ու դրանք մանր առեւտրի ոլորտ են ներմուծվում դրսից, ուստի դրանց հետ կապված առեւտրի եւ հասարակական համագործակցությունն ապահովող մի շարք մշակութային փաստեր, որպես նորույթ, նույնպես ընդօրինակվում են դրսից՝ աստիճանաբար թուլացնելով մշակութային համակարգի նորույթների պահանջարկը սեփական ռեսուրսներով բավարարելու կարողությունը: Օտար մշակութային տարրերի պարզ, արտաքին ընդօրինակումը առաջացրել է նաեւ այն միտումը, երբ մշակութային տարրը, հասարակական համագործակցության մեջ կորցնելով բովանդակային գործառույթը պահպանում է միայն արտաքինը՝ ձեւականը:

Նորույթի հասարակական գործառույթներից մեկը մարդու ինքնուրույնության եւ ընտրության, վճիռ կայացնելու հնարավորության ընդլայնումն է: Այն հասարակական միջավայրը, ուր մշակութային նորույթները ոչ մի-

[9] Ընդհանրապես, առեւտրի եւ առեւտրականների հասարակական-մշակութային գործառույթների մասին ուշագրավ մոտեցումներ են ներկայացված՝ Лесли А. Уайт, Экономическая структура высоких культур / Анталогия исследования культуры, С-Пб., 1997, сс 336-337.

այն չեն նպաստում զարգացման բազմազանությանը, այլեւ ընդհակառակը՝ սահմանափակում են այն, մշակութային առումով անառողջ է: Մշակութային նման իրավիճակը կարելի է բնութագրել որպես միտում դեպի ճգնաժամ:

Էժան աշխատուժի գործոնը: Փաստը, որ Հայաստանում աշխատուժը չափազանց էժան է, նույնպես տնտեսական ներքին քաղաքականության հետեւանք է: Դրա գլխավոր պատճառը աշխատատեղերի պակասն է եւ մասնագիտական զբաղվածության ոլորտների սահմանափակությունը: Դրա հետեւանքը ազատ աշխատուժի հսկայական ծավալն է: 100-150 ԱՄՆ դոլարի սահմաններում եւ դրանից բարձր աշխատավարձով աշխատատեղերն այսօր հնարավոր է զբաղեցնել միայն մրցութային կարգով: Ի դեպ, դրա համար պահանջվում է բավականին բարձր որակական տվյալներ՝ մասնագիտական պատրաստվածություն, բարձրագույն կրթություն, օտար լեզուների եւ համակարգչային հմտությունների իմացություններ: Նման աշխատատեղերը հիմնականում վերաբերում են առեւտրական կազմակերպություններին, պրեստիժային խանութների սպասարկող ծառայություններին, արտասահմանյան համատեղ ձեռնարկություններին, ինչպես նաեւ տարբեր տեսակի արտասահմանյան գրասենյակներին: Տեղական առեւտրական ոլորտներում վաճառողի միջին աշխատավարձը տատանվում է օրական 500-1500 դրամի սահմաններում:

Մասնագիտական զբաղվածության ոլորտների սահմանափակությունը եւ աշխատատեղերի պակասը շատ որակյալ մասնագետների մղում է թողնել մասնագիտությունը և աշխատանք փնտրել առեւտրական ոլորտում: Դա նշանակում է, որ քաղաքացին, զրկված լինելով իր ընդունակությունների դրսեւորման համար համապատասխան աշխատանքից եւ դրա դիմաց համազոր վճար ստանալու հնարավորությունից, ընդունում է իրեն առաջարկված ցանկացած աշխատանք՝ ամենացածր վարձադրությամբ: Հայաստանում աշխատավարձի չափի որոշման չափանիշը ոչ թե կատարվող աշխատանքի արժեքն է, այլ կենցաղային առաջնային պայմանների բավարարման գումարային չափը: Հայաստանում միջին ընտանիքի սննդի առաջնային պահանջների բավարարման համար անհրաժեշտ է նվազագույնը 150-200 ԱՄՆ դոլար և լավագույն դեպքում ընտանիքի անդամներից միայն մեկին կհաջողվի գտնել նման վճարով աշխատատեղ[10]:

Ուստի, զբաղվածության ոլորտների սահմանափակվածությունն առաջացնում է կենցաղային առաջնային պահանջմունքները բավարարող աշխատավարձի չափը: Փաստորեն, սա էժան աշխատուժի գոյության առաջին բացասական հետեւանքն է, երբ մի հարթության խնդիրը լուծվում է այլ հարթության չափանիշներով: Աշխատանքի արժեքը որոշվում է տվյալ տնտեսական գործարքի մեջ նրա կշռի չափով եւ ֆունկցիայով, ինչպես նաեւ դրա վրա ծախսվող աշխատաժամանակով: Այնինչ, Հայաստանում աշխատավարձի չափը կապ չունի այն տնտեսական գործարքի հետ, որին իր չափով մասնակցում է վարձու աշխատողը, այլ ավելի շատ պայմանավորված է ընտանիքի նվազագույն պահանջները բավարարող գումարի չափով: Այդ պատճառով թե շինարարության ոլորտի, թե առեւտրի եւ թե մասնավոր արտադրության մեջ վարձու աշխատանքի վճարը համատարած կազմում է 150-200 /+ 50/ ԱՄՆ դոլար: Աշխատուժի ավելցուկը Հայաստանում ունի իր առանձնահատկությունը: Այն ոչ թե գոյություն ունի տնտեսական համակարգի գործառնությունը ապահովող աշխատանքային գործունեության ոլորտներում զբաղվածության հագեցվածության, այլ պարզապես նման գործունեության ոլորտների չձեւավորվածության եւ բացակայության պատճառով: Աշխատուժի նման ավելցուկի առաջացումն առողջ երեւույթ չէ այն պատճառով, որ այն պայմանավորված չէ հասարակության տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործմամբ: Հասարակական տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործում նշանակում է տնտեսության կազմակերպումը մարդկային, բնական եւ հնարավոր ներմուծվի ռեսուրսների նպատակային օգտագործման միջոցով տնտեսական համակարգի վերարտադրությունը եւ զարգացումը ապահովելու նպատակով:

Հասարակության համագործակցության տեսանկյունից տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը հնարավորություն է ստեղծում ասիմիլիացիոն գործընթացի եւ սոցիալիզացիայի համար[11], այսինքն՝՝ ապրանքների ձեռք բերման, օգտագործման եւ մարդկանց միջեւ փոխհարաբերությունների հաստատման եւ զարգացման համար: Թե առաջինը եւ

[10] Այս հարցի շուրջ մանրամասն տես՝ Թադեւոսյան Ա., Աղքատության համակարգային հիմքերն ու հաղթահարման ուղիները Հայաստանում, Երեւան, 2001:

[11] Նշված երեւույթների մասին տես՝ Э. Фромм, Человек для самого себя / Психоанализ и этика, М., 1994, с. 59.,

թե երկրորդը որոշիչ են մշակութային փաստերի գործառնության տեսանկյունից: Այսպես, ապրանքների ձեռքբերումը եւ օգտագործումը, որպես համագործակցության ձեւ, նպաստում են մշակութային փաստերի ձեւավորմանն ու զարգացմանը: Նույնը կարելի է ասել մարդկանց միջեւ փոխհարաբերությունների համակարգի մասին: Քանի որ, ինչպես տեսանք, աշխատուժի ավելցուկի եւ էժանության հայաստանյան իրավիճակն ուղեկցվում է տնտեսական ներուժի ոչ արդյունավետ օգտագործմամբ, հետեւաբար նաեւ ասիմիլիացիայի եւ սոցիալիզացիայի գործընթացների թուլացմամբ, հագեցնում է դրանց կողմից պայմանավորող մշակութային փաստերի աղքատացման եւ սահմանափակման: Այսպիսով, Հայաստանում էժան աշխատուժի կամ ոչ արդյունավետ տնտեսական համակարգում աշխատուժի ավելցուկի հետեւանքում հարուցված մշակութային տենդենցը բնութագրվում է մշակութային փաստերի քանակական եւ որակական սղաճով /արժեզրկում/: Ասիմիլիացիոն գործընթացների ոչ նորմալ պատկերն, օրինակ, Երեւանում, ըստ որոշ աղբյուրների այսպիսին է՝ 10% առավել ապահով շերտը տնօրինում է բնակչության եկամուտների շուրջ 45%-ը: Իսկ սոցիալիզացիայի պատկերը 80% աղքատներ, մոտ 15% ապահովվածներ եւ 4-5% հարուստներ[12]: Դա առաջացնում է աղքատների եւ ունեւորների իրար նկատմամբ անհանդուրժողական եւ մերժողական հասարակական վարք: Դա սահմանափակում է նաեւ սոցիալական նեղ խմբերի կամ շրջանակների առաջացումը, որի բազմազանությունն, ըստ էության, խոսում է տվյալ հասարակության զարգացման մակարդակի եւ մշակութային փաստերի բազմազանության եւ հղկվածության բարձր մակարդակի հնարավորության մասին: Հայաստանում աշխատուժի ավելցուկը եւ էժան աշխատուժը, բացառելով հասարակայնապես օգտակար սոցիալական խմբերի եւ շրջանակների բազմազանությունը, նպաստում են ստվերային տնտեսությանը հարազատ քրեամետ աշխարհին բնորոշ մշակութային փաստերի օգտագործմանը եւ տարածմանը: Այս առումով պատահական չէ, այսպես կոչված, «ռաբիզների» եւ «գողականների» միջավայրում տարածված տարրերի ընդօրինակումը երիտասարդության եւ նույնիսկ՝՝ ուսանողական միջավայրում: Ըստ ԵՊՀ ազգագրության ամբիոնի ուսանողների ուժերով կազմակերպված

[12] Հայաստանում բնակչության բեւեռացման մասին տես՝ Խառատյան Հր., Աղքատությունը եւ ժողովրդավարությունը Հայաստանում, Երեւան, 2000:

հարցումների, ԵՊՀ ուսանողների մեջ տարածված են «խարոշիներ», «գողականներ», «ռաբիզներ» անվանումը կրող շերտեր:

Աշխատուժի ավելցուկի վերը նշված այն պատճառը, ըստ որի, ավելցուկը պայմանավորում է ոչ թե տնտեսական համակարգի գործառնությունն ապահովող աշխատանքային գործունեության ոլորտներում զբաղվածության հագեցվածությամբ, այլ պարզապես այդ ոլորտների բացակայությամբ, վտանգավոր է նաեւ մշակութային տեսանկյունից: Վարձու աշխատողի եւ գործատեր սեփականատիրոջ միջեւ ձեւավորվող աշխատանքային համագործակցությունն առաջացնում է վարձու աշխատողի խիստ կախվածությունը՝ կապված աշխատատեղից զրկվելու վախի հետ: Վերջինս նշանակում է, որ տնտեսական-աշխատանքային համագործակցությունը կազմակերպվում է ոչ քաղաքացիական հասարակության եւ քաղաքացիության սկզբունքների հիման վրա եւ առաջացնում ոչ իրավահավասար ու համազոր կողմերի միջեւ գործարք: Համագործակցության նման եղանակը ծնում է մշակութային համապատասխան փաստեր: Այսինքն, հասարակական համագործակցության մեջ տնտեսական, քաղաքացիական, նորմատիվ եւ այլ փոխհարաբերությունների հարստության եւ բազմազանության պակասը հանգեցնում է տնտեսական, քաղաքական եւ նույնիսկ պետական մակարդակի հարցերի լուծմանն ազգակցական, դրացիական կամ անձնական փոխհարաբերությունների մեխանիզմների գործառնության միջոցով, ինչը վկայում է մշակույթի ցածր մակարդակի եւ ճգնաժամային վիճակի մասին: Այդ պատճառով մշակութային փաստերը ձեռք են բերում ոչ այնքան քաղաքացիական հասարակության զարգացումը խթանող, որքան՝ ազգակցական, դրացիական, անձնական ծանոթությունների եւ դրանց հիման վրա գործող խմբային համագործակցության ձեւերը պայմանավորող բնույթ, որոնք էլ իրենց հերթին խոչընդոտում են հասարակության համախմբման գործընթացները՝ խախտելով մշակույթի համապատասխան հանրային գործառույթը:

Նման իրավիճակներում մշակութային փաստը հանրային նեղ, սկզբնական-խմբային մակարդակից չի վերաճում հասարակական փաստի: Եւ, ինչպես հասարակական նշանակության մակարդակի փաստերը հակասության մեջ են սոցիալական նեղ խմբային փաստերի հետ, այնպես էլ հակասություն է առաջանում հասարակական փաստերի եւ մշակութային փաստերի միջեւ: Մշակութային փաստը դադարում է ծառայել հասարա-

կական համընդհանուր բնույթի համագործակցությանը դառնալով առանձին խմբերի գործառնությունը պայմանավորող միջոց: Այսինքն, տնտեսական համակարգի առաջացրած մշակութային փաստերն այսօր ունեն ոչ թե հասարակական համագործակցությունն ամրացնելու, այլ մասնատելու, պառակտելու ու հակադրելու միտում:

Ամփոփելով վերլուծության այս հատվածը, կարելի է անել մի շարք նախնական եզրակացություններ: Կարելի է ասել, որ տնտեսական անցումային փուլի հասարակական համագործակցության վերը նշված հետեւանքներն առաջացրել են հետեւյալ մշակութային գործընթացները.

ա. որակյալ աշխատուժի՝ ներառյալ նորույթների ներմուծման ունակ քաղաքային երիտասարդության կրավորացման եւ մշակութային գործընթացների գավառայնացման եւ գավառային ազդեցիկության ու հսկողության միտում:

բ. Փողոցային մանր առեւտրական տնտեսական համագործակցությունը հասարակության ասիմիլիացիոն գործընթացներում /ապրանքների ձեռք բերման եւ օգտագործման/ մեծացրել է օտարերկրյա էժանագին եւ անորակ ներմուծովի ապրանքների յուրացումը, մի կողմից թուլացնելով մշակութային համակարգում նորույթների պահանջարկը սեփական ռեսուրսներով բավարարելու կարողությունը,, եւ մյուս կողմից՝ սահմանափակելով հասարակական համագործակցության եւ մշակութային փաստերի բազմազանության հնարավորությունը:

գ. Աշխատուժի ավելցուկի հայաստանյան տարբերակը նպաստում է այնպիսի մշակութային փաստերի զարգացմանը, որոնք չեն նպաստում հասարակական համընդհանուր բնույթի համագործակցությանը՝ դառնալով առանձին խմբերի գործառնությունը պայմանավորող միջոց:

Այս գործընթացների համադրումը թույլ է տալիս բացահայտել հասարակության համագործակցության եւ մշակութային փաստերի զարգացման հետեւյալ միտումները:

Գավառային հասարակական համագործակցությանն առավել բնորոշ է ազգակցական, դրացիական, անձնական կապերի գործառնությունը եւ, հետեւաբար, այն ապահովող մշակութային փաստերը: Ուստի մշակութային համակարգում նորույթների ներմուծման գավառայնացումը հասարակական գործառական /ֆունկցիոնալ/ տեսանկյունից մեծացնում է մշակութային փաստերի բազմազանության սահմանափակման հավանականությունը:

Մշակութային համակարգում նորույթների ներմուծման նախաձեռնության անցումը դրան ոչ կոմպետենտ հասարակական խավերի ձեռքը, խախտում է մշակութային ավանդութային շերտի հետ դրանց ներդաշնակ զուգակցման մեխանիզմները եւ առաջացնում ազգային մշակութային ստերեոտիպերի ոչ բնականոն մոդեռնիզացում՝ գլխավորապես ձեւի պահպանման պայմանով դրա բովանդակային-իմաստային գործառույթի անտեսմամբ: **Մշակութային ադապտացիան համակարգի իննովացիոն հատկությունների եւ կայուն որակների /ավանդույթի/ համադրության այնպիսի ներդաշնակ գործընթաց է, որը նպաստում է այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք խթանում են հասարակության մշակութային պահանջմունքների բազմակողմանի բավարարմանը:** Քանի որ Հայաստանում տնտեսական անցումային փուլի ներկայիս հատվածը հանգեցրել է մշակույթի նորույթային եւ ավանդույթային գործընթացների խախտման եւ նեղ, խմբային համագործակցությունը խթանող մշակութային փաստերի առաջացման, ապա կարելի է պնդել, որ այն մշակութային համակարգի գործառնության վրա ազդում է բացասաբար: Հետեւաբար, տնտեսության անցումային փուլի ձեռնարկումները առողջ եւ բարենպաստ չեն էթնիկ-մշակութային տեսանկյունից: Ըստ էության, այն չի կարող դրական արդյունքներ ունենալ նաեւ տնտեսական առումով, քանի որ հանգեցնում է մշակութային ոչ նորմալ համագործակցության բացասական կողմերի ամրապնդմանը եւ տնտեսական ներուժի, էներգիայի, եղանակների ոչ արդյունավետ օգտագործման:

2. Մշակույթի խմբային եւ հասարակական գործառույթը հայաստանում

Ինչպես արդեն փորձ արվեց ցույց տալ, մշակույթը հասարակության համագործակցությունն ապահովող ձեւերի եւ միջոցների այնպիսի ամբողջություն է, որը պայմանավորում է տվյալ հանրույթի էթնիկ առանձնահատկությունը: Ցանկացած էթնիկ հանրույթում մշակույթի բովանդակությունը պայմանավորված է ձեւավորվող պահանջմունքների բնույթով եւ դրանց բավարարման առանձնահատկություններով: Մշակույթն, ըստ էության, գործառութային տեսանկյունից ուղղված է առաջացող պահանջմունքների բավարարմանը: Այս առումով հասարակության ձեւավորվող պահանջմունքների բնույթը պայմանավորում է նաեւ մշակույթի զարգացման տեսանկյունները: Ընդհանրապես, ընդունված է պահանջմունքները դասակարգել ըստ առաջնային-հիմնարար, ածանցյալ եւ համախմբիչ-հաղորդակցական հատկանիշների[13]: Առաջնային-հիմնարարի մեջ մտնում են հիմնականում մարդու կենսապահովման պահանջմունքները՝ սննդի, հագուստի, վառելիքի ու ջեռուցման եւ այլն: Ածանցյալ պահանջմունքների դասին են պատկանում նրանք, որոնց կարիքը մարդիկ զգում են առաջնային պահանջմունքների բավարարման գործում: Եվ վերջապես հաղորդակցման, համախմբման պահանջմունքներն առաջանում են այլ պահանջմունքների բավարարմանն ուղղված համագործակցության գործընթացում, երբ մարդիկ ձեւավորում են ինքնակազմակերպման օղակներ ու հաստատություններ եւ դրանց միջոցով իրականացնում իրենց համագործակցությունը: Պահանջմունքների մի կարգի բավարարման որոշակի աստիճանում ի հայտ են գալիս նոր պահանջմունքներ: Հետեւաբար, մշակութային առաջընթացի հնարավորությունը ձեւավորվում է, եթե հանրության մեջ առաջանում են նոր տիպի պահանջմունքներ: Այս առումով հասարակական կյանքի կազմակերպման մշակույթը պահանջմունքային տեսանկյունից ածանցյալ է հիմարար պահանջմունքներին եւ մասամբ պայմանավորված է այդ պահանջմունքների բավարարման աստիճանով, մասամբ էլ՝ հանրույթում համախմբման պահանջմունքի աստիճանով: Վերը մենք անդրադարձել ենք այն հանգամանքին, թե Հայաստանում վերջին տարիներին աշխատանքի մասնագիտական բաժանման պատկերի սնանկացումը ի՞նչ հետեւանքներ է թողել մշակույթի վրա: Որպես հիմնական բացասական հետեւանք կարելի է նշել մշակութային գործընթացների խմբակայնացումը, որը նշանակում է, որ մշակութային տարրերը ավելի շատ խմբային պահանջմունքների բավարարման դաշտում են գործում, քան հանրային եւ ազգային: Քանի որ հասարակական մշակույթում խմբայինի եւ հանրայինի հարաբերակցությունն առանցքային դերակատարություն ունի ազգային մշակույթի զարգացման վրա, դրան կփորձենք առանձնակի ուշադրություն նվիրել:

Մշակույթի գործառույթն ըստ խմբային եւ հասարակական արժեքային հարթությունների, կազմակերպչական առումով ուղղված է էականորեն տարբեր պահանջմունքների բավարարմանը: Եթե խմբային գնահատման տեսանկյունից մշակույթը հարմարեցվում է խմբային նպատակներին եւ ամեն ինչ, այդ թվում եւ մարդը, ընտանիքը, մշակութային արժեքները, հասարակական եւ պետական հաստատություններն արժեքավորում են խմբի վերարտադրության ու դրան օգտակարության տեսանկյունից, ապա հասարակական համագործակցության դաշտում մշակույթը ծառայում է հասարակության յուրաքանչյուր անդամի լիակատար եւ լիարժեք ինքնահիրացման պահանջմունքին: Մշակույթն այս առումով ստանում է հասարակական-պետական կառույցում համակեցությունը պայմանավորող համընդհանուր արժեքի նշանակություն, քանի որ այն ձեռք է բերում անհատի ազատության եւ ստեղծագործ հատկությունների իրացման պահանջմունքի բավարարմանը նպատակաուղղված հաստատության գործառույթ:

Մշակութային նման միջավայրում պահանջմունքների բավարարման գործընթացում անձական շահերը համապատասխանում են հանրայինին: Նման միջավայրում հանրային կառույցը հանդիսանում է ոչ թե մարդկային ազատության սահմանափակող, այլ դրա դրսեւորման պայմանների վերարտադրության երաշխավոր: Ուստի, անհատի համար մշակույթի եւ մշակութային հաստատությունների վերարտադրությունը դառնում է արժեքային կարգավիճակ ունեցող պահանջմունք, քանի որ անհատը նման մշակութային միջավայրում ձեռք է բերում մշակութաստեղծման մասնակցության հնարավորություն: Այսինքն, այնպիսի մի իրավիճակ, երբ մարդն իր ստեղծագործական մղումների իրացման համար ունի

[13] Лурье С. Историческая этнология, М., 1998, с 18-19.

ազատ պայմաններ եւ դրա միջոցով կարողանում է մասնակցել նաեւ մշակութային միջավայրի շարժընթաց վերարտադրությանը: Մշակութային միջավայրի ձեւավորման մեջ անհատի լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովումը իրականանալի չէ խմբակային միջավայրում, քանի որ դրանում կարեւորվում է ոչ թե մշակույթ կրող անհատը, այլ այդ խումբը եւ խմբի ներսում իշխողների իշխանության վերարտադրությունը: Հետեւաբար, խմբակային միջավայրերում մշակութային վերարտադրությունը խմբային իշխող վերնախավի մենաշնորհն է: Մշակութային վերարտադրության գործընթացի նկատմամբ խմբային իշխանիկների վերահսկողության կորուստը կարող է խոչընդոտել հասարակությանն իրենցից կախվածության մեջ պահող արժեքների վերարտադրությանը: Խմբակային ավտորիտար մշակույթն ուղղված է անհատին այդ մշակույթի մեխանիկական կրողը դարձնելուն եւ բացառում է անհատի ակտիվ /ստեղծագործ/ մասնակցությունը մշակութային վերարտադրության գործընթացներին: Անհատը նման համակարգերում կարող է իրականացնել միայն խմբի կողմից իրեն թելադրվող մշակութային արժեքները կրողի գործառույթ: Ահա այս հիմնական եւ սկզբունքային՝ մարդու տեղի եւ դերի խնդիրը մշակութային վերարտադրության գործընթացներում պայմանավորում է մշակույթի խմբակային եւ հասարակական /«փակ» եւ «բաց»/ բնույթը: Կարելի է ասել, որ խմբակային մշակույթն ունի ավտորիտար բնույթ, իսկ հասարակական մշակույթը՝ մարդակենտրոն, եւ եթե առաջինում մշակույթը ծառայում է խմբային ավտորիտարիզմի պահպանմանը, ապա երկրորդում՝ անհատի եւ հասարակության արժեքային ընդհանրությունների եւ հոգեւոր կապի ձեւավորմանը, դրանով իսկ նպաստելով թե՛ անհատի, թե՛ հասարակության զարգացմանը: Մեր կարծիքով, մշակութային համակարգում ու գործընթացներում մարդու տեղի եւ դերի խնդիրը պայմանավորում է նաեւ էթնոմշակութային համակարգի բնույթն ընդհանրապես:

Կախված նրանից, թե տվյալ էթնոմշակութային հանրույթը քաղաքական ինչպիսի կարգավիճակ ունի, առանցքային նշանակություն է ստանում նաեւ մշակույթի խմբակային թե հասարակական բնույթի, հետեւաբար՝ մշակույթում մարդու տեղի եւ դերի խնդիրը: Եթե էթնոմշակութային հանրույթը չունի իր ինքնության երաշխիքը հանդիսացող անկախ պետական կառույց, ապա այն ստիպված է լինում կենտրոնացնել իր ռեսուրսները օտար միջավայրում ինքնամփոփման եւ ինքնություն այդ ձեւով պահպանելու վրա: Սակայն, անկախ պետականությունը թույլ է տալիս ինքնապահպանության եւ ապահովման գործառույթները դնել պետական կառույցի վրա եւ մշակութային կյանքում լինել ավելի անկաշկանդ ու ազատ: Այսինքն, մշակույթի խմբակային բնույթից հասարակականին անցումը հնարավոր է միայն պետական այնպիսի համակարգի առկայության դեպքում, որը երաշխավորում է օտար համակարգերից ապահովվածությունը մի կողմից, եւ մշակութային ինքնության անկաշկանդ վերարտադրության պայմանների ձեւավորումը՝ մյուս կողմից: Նման իրավիճակում, երբ բացակայում է կամ նվազագույնի է հասցված մեխանիկական ձուլման ու ինքնության կորստի վտանգը, մարդու ակտիվ մասնակցությունը մշակութային գործընթացներին կարող է դառնալ տվյալ էթնոմշակութային հանրույթի զարգացման եւ պետական այլ հանրույթների հետ համաքայլության պայմանը: Հակառակ դեպքում, խմբակային մշակույթը կարող է արժեզրկել պետության անհրաժեշտության իմաստը, քանի որ պետությունն իր մշակութային գործառույթները շարունակում է թողնել խմբակային համագործակցության կառույցների ձեռքում եւ չի ձեւավորվում այնպիսի մշակութային համակարգ, որում որպես հասարակական կառույց, դերակատարության ազդեցիկ կշիռ ունեն նաեւ պետությունը եւ հասարակական այլ հաստատությունները: Եթե պետությունը չի ստանձնում իր հասարակական կառույցի դերակատարությունը, ապա խմբակային ինստիտուտները հավակնում են տիրելու պետական ինստիտուտներին եւ դրանք օգտագործելու խմբակային մշակույթի վերարտադրությանը ծառայեցնելու նպատակով: Դա հնարավոր է դառնում, երբ խմբակային բնույթի հաստատությունները կարողանում են նաեւ հասարակությունից խլել պետական հաստատությունների վերահսկողության գործառույթը:

Մեր կարծիքով, մշակութային ինքնության առանցքային գործոնը, որը պայմանավորում է նաեւ էթնիկ ինքնությունը, մշակույթի այնպիսի մի կարեւոր բաղադրիչի բնույթն է, որը մենք կանվանենք համագործակցության մշակույթ: Համագործակցության մշակույթ ասելով, նկատի ունենք էթնոսի անդամների միջեւ պահանջմունքների բավարարման տարբեր հարթություններում համատեղ գործելու եւ հարաբերությունները կառուցելու ձեւերն ու մեխանիզմները: Կախված նրանից, թե ինչպիսին է համագործակցության մշակույթը, որոշվում է, թե էթնոսի անդամներն էթնոմշակութային

միջավայրում մշակութային գործընթացներին եւ մշակույթի ձեւավորմանը մասնակցելու ի՞նչ հնարավորություններ ունեն: Ի դեպ, էթնոսի համագործակցության մշակույթը որոշիչ ազդեցություն է ունենում ոչ միայն հասարակական հարաբերությունների, այլ նաեւ տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների կազմակերպման վրա: Եթե համագործակցության մշակույթը խմբակային է, ապա քաղաքական համակարգում իշխող է դառնում կլանայնությունը, իսկ տնտեսականում՝ ստվերայնությունը, քանի որ որոշիչ է դառնում ոչ թե տնտեսական հարթությունում գործառող մաքուր շահը, այլ՝ խմբակայինը: Հետեւաբար տնտեսական հարաբերությունները կազմակերպվում են ոչ թե մարդու տնտեսական օգտակարության չափանիշներին համապատասխան, այլ ըստ խմբային պատկանելության: Նման ձեւով մշակույթը պայմանավորում է նաեւ հասարակության աստիճանակարգումն ըստ դերերի: Հասարակության մեջ ավելի կարգավիճակային են դառնում ոչ թե հասարակական օգտակարություն ունեցող դերերը, այլ այս կամ այն խմբին պատկանելը: Համագործակցության խմբակային մշակութային միջավայրում էլիտան ձեւավորվում է ոչ թե կոմպետենտ հեղինակության, այլ այս կամ այն խմբին ու շրջանակին մեխանիկական պատկանելության սկզբունքով:

Հայաստանում ձեւավորված իրավիճակը այս տեսանկյունից դիտարկելու դեպքում կարելի է ասել, որ գերակշռում է խմբակային համագործակցության մշակույթը: Մշակութային առանձնահատկությունները, որ ցայտուն ձեւով դրսեւորվում են հատկապես ճգնաժամային իրավիճակներում ելքեր եւ լուծումներ առաջադրելու դեպքում, թույլ են տալիս ենթադրություններ անել տվյալ հանրույթի համագործակցության մշակութային տիպի մասին: Այս տեսանկյունից կարելի է պնդել, որ հայերի համագործակցության մշակութային տիպը ավելի շատ խմբակային է, քան հասարակական: Եթե դիտարկենք Հայաստանում ձեւավորված ճգնաժամային իրավիճակը եւ հասարակական համագործակցության տիպը, ապա դրանում որոշակիորեն բացահայտվում են խմբակային տարրեր:

Հատկապես 1992-1995 թթ. ճգնաժամային տարիներին խմբակային համագործակցությունը նպատակուղղվեց գլխավորապես գոյատեւման խնդիրների լուծմանը: Հայաստանում պահանջմունքների վերին սահմանագծի համատարած կտրուկ անկումը սեփականության վերարտադրման հնարավորությունների բացակայության պայմաններում, հանգեցրեց բոլոր արժեքների ստորադասմանը գոյատեւման նպատակներին[14]:

Մեր համագործակցության մշակույթի խմբակայնության մասին է խոսում հենց նույն գոյատեւման եւ, ընդհանրապես, պահանջմունքների բավարարման նպատակով կազմակերպվող համագործակցության ձեւերը: Հատկապես այս առումով հատկանշական է էներգետիկ ճգնաժամի շրջանում «ձախ» լարանցումների «համազգային իրարանցումը», որը նույնիսկ այդ թեմայով ֆոլկլորի ձեւավորման պատճառ դարձավ: Մարդիկ, փաստորեն, էլեկտրաէներգիայի մատակարարման հիմնախնդիրը լուծելու նպատակով համախմբվում էին ոչ թե հասարակական միավորումներով եւ ձգտում լուծել հիմնախնդիրը բոլորի ուժերով բոլորի համար, այլ յուրաքանչյուրը ձգտում էր լուծել խնդիրը իր ուժերով իր ընտանիքի համար: Ստեղծվում էին իրավիճակներ, երբ տարիներով իրար կողք ապրող հարեւաններից մեկն ունենում էր հոսանք, իսկ մյուսը՝ ոչ: Եվ այստեղ չէին գործում անգամ դրացիական համագործակցության մշակութային տարրերը: Նույնը կատարվում էր ճգնաժամային ցանկացած իրավիճակում, երբ անձնական-խմբակային շահը դառնում է համագործակցության մշակույթը պայմանավորող հիմնական տարրը:

Այս առումով հայ ժողովրդի համագործակցության մշակույթն ունի խոր ավանդույթներ՝ ընտանեկան, համայնական մշակույթներում, որոնցում արմատավորված են ազգակցական, արյունակցական, դրացիական եւ այլ մեխանիկական գործոններով պայմանավորված տարրերը:

Ուշադրություն դարձնենք մի հատկանշական խնդրի վրա նույնպես: Դա այն է, որ հետխորհրդային հայաստանյան հասարակության խմբային համագործակցության մշակույթը բնակչության մեծամասնության մոտ ուղղված է գոյատեւման պահանջմունքների բավարարմանը: Պատահական չէ, որ հասարակական ինքնանկարագրման[15] հիմնական բնութագրիչները, նույնիսկ բարվոք սոցիալական վիճակում գտնվողների մոտ ներկայացվում է որպես «յոլա գնալ», «տուն պահել», «ընտանիք պահել»: Հարկ է խոստովանել, որ չնայած իրականության մեջ շատերի սոցիալական վիճակը վեր է գոյատեւման վիճակից, սակայն պահանջմունքների

[14] Թադեւոսյան Ա., Գոյատեւման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում, Երեւան, 1998, էջ 3.

[15] Այս եզրը փոխառված է Ն.Լումանից: Տես՝ Луман Н., Тафталогия и парадокс в самоописаниях современного общества / Социо-логос, вып.1, М., 1991, с. 194-219.

հիմնական սանդղակում առաջնային տեղ է տրվում սննդի, հագուստի ու կենցաղային այլ պայմանների բավարարմանը, այսինքն՝ առավել կարևոր նշանակություն ունեն առաջնային պահանջմունքները, քան մշակութային բարձր զարգացվածություն բնորոշող այնպիսի պահանջմունքներ, ինչպիսիք են գեղագիտական, ստեղծագործական, հոգեւոր եւ հումանիտար բնույթի պահանջմունքները: Հետեւաբար, համագործակցության մշակույթը նույնպես կենտրոնացված է առաջնային պահանջմունքների բավարարման վրա եւ նրանում շատ դժվարությամբ են տեղ գտնում մարդկային համագործակցության այնպիսի բաղադրիչներ, որոնք ավելի շատ գաղափարական ու հոգեւոր են, քան նյութական: Սա այն մշակութային անառողջ իրավիճակն է, երբ համագործակցության մշակույթը առավելապես նյութականացված է: Իսկ նյութականացված մշակույթը էթնիկ ինքնության վերարտադրության գործում շատ ավելի թույլ դերակատարություն է ունենում, քան գաղափարականացվածը, քանի որ էթնոմշակութային համալիրը կորցնում է հանրույթի համագործակցությունը պայմանավորող հոգեւոր հիմքերը:

Համագործակցության մշակույթի նյութականացումը եւ դրա նպատակաուղղումը գոյատեւման պահանջմունքների բավարարմանը, մեր հասարակության մեջ վերջին տարիներին առաջացրել է ծայրահեղ հարմարվողականության պատրաստակամություն: Դրա առավել բացասական կողմն այն է, որ հարմարողականության այդ գործընթացում տեղի է ունենում գոյատեւման խնդիրներից վեր կանգնած արժեքների կորուստ, կամ լավագույն դեպքում՝ դրանց ստորադասում գոյատեւման կամ նյութական պահանջմունքների բավարարմանը: Կարելի է ասել, որ արժեքային զիջողականության միջոցով հարմարվողականությունը 1992 թվականից ի վեր դարձել է հետխորհրդային շրջանի հայ հասարակության մշակութային հիմնական բնութագրիչներից մեկը: Համագործակցության մշակույթի նյութականացումը հանգեցրել է նաեւ նրան, որ մեր իրականության մեջ արագորեն արմատավորվում են սպառողական ինտենսիվ եղանակները՝ ի հակադրություն էքստենսիվի: Այսինքն, բնակչության, որպես սպառողի, միջավայրում ձեւավորվել է քանակական հատկանիշի գերադասությունը որակականի համեմատ: Դա նաեւ այն իրականության ձեւավորման պատճառներից մեկն է, ինչը Հայաստանը վեր է ածել արժեքավոր ապրանքների անորակ կեղծօրինակների մասսայական սպառման շուկայի: Այս հատկանիշի արմատավորումը նպաստում է մեկ այլ բացասական երեւույթի ձեւավորմանը: Դա ստեղծագործ մոտեցումն ընդօրինակողի մոտեցմամբ փոխարինվելու վտանգն է մեր հասարակության մեջ: Եթե հասարակության համագործակցության մշակութային հարթությունում ընթացող գործընթացների տարերային ներկա զարգացումները հանգեցնեն նրան, որ մեր հասարակության մեջ իրոք ստեղծագործական մղումները ստորակարգվեն ընդօրինակման մղումներին, ապա մեր մշակութային ինքնության վերարտադրության մասին բոլոր խոսակցությունները կարող են դառնալ ավելորդ եւ ուշացած: Խոսքն այն մասին է, որ ընդօրինակումը լինում է ամպայման օտար միջավայրից: Եթե ընդօրինակումը կատարվի նույնիսկ հարմարեցման ճանապարհով, միեւնույն է դա չի կարող ապահովել մշակութային ինքնության պահպանումը: Սերնդե սերունդ այս իրավիճակի փոխանցումը կարող է հայկական մշակույթը վեր ածել դիմազրկված եւ ցածրարժեք ընդօրինակություններից ու կրկնօրինակություններից կազմված գավառային մշակույթի, որի ինքնությունն ամփոփվում է բարձրարժեք մշակույթների ցածրարժեք ընդօրինակումներում:

Իսկ նման իրավիճակի ձեւավորման պատճառները բացահայտելու համար նորից պետք է հայացքներս ուղղենք համագործակցության մշակույթի ներկայիս գործընթացներին: Խնդիրն այն է, որ հասարակության ստեղծագործական եւ ընդօրինակման հատկանիշներն ուղղակիորեն պայմանավորված են համագործակցության մշակույթի խմբակային եւ հասարակական հատկանիշներով: Եթե համագործակցության մշակույթում գերիշխում է խմբակայինը, ապա այդ համագործակցության մեջ խմբի ստորադաս կարգավիճակում գտնվող անձերի ու կառույցների համար ընդօրինակման աղբյուրը իշխող հեղինակություններն են, եւ խմբում նրանց իշխանությունը վերարտադրող հաստատություններն ու մեխանիզմները: Նման համագործակցությունը սահմանափակում է մարդու ստեղծագործաբար ինքնահիրացվելու հնարավորությունները, քանի որ դա ձեւավորում է համագործակցային մշակույթը գաղափարականացնելու, հետեւաբար՝ խմբակային ավտորիտարիզմը թուլացնելու վտանգ: Այդ պատճառով խմբակային համագործակցության մշակույթն իր ստերեոտիպերի գործարկման միջոցով սահմանափակում է մարդու ազատության հնարավորությունը եւ ամեն կերպ աշխատում մարդկանց կախյալ վիճակի մեջ պահել: Այն հիմնականում իրականացվում է հանրությանն ուժի եւ

նյութականի ենթակայության մեջ պահելու միջոցով: Եթե մենք անաչառ գնահատենք մեզանում ձեւավորված իրավիճակը, ապա այն կարելի է բնութագրել որպես խմբակային ավտորիտարիզմ, որի իշխանությունը պահելու ուժային եւ նյութական մեխանիզմների ազդեցության տակ հասարակական համագործակցության մշակույթը ձեռք է բերում անհատի եւ ազգի ստեղծագործական մղումները եւ կարողությունները ճնշող խմբակային համակարգի հատկանիշներ: Սա առաջին հայացքից թվում, է թե անմիջական կապ չունի մշակութային ինքնության պահպանման խնդրի հետ, սակայն ներկայիս աշխարհի զարգացման գործընթացներում իր էթնոմշակութային ինքնությունը պահպանելու եւ վերարտադրելու կարողություններ կարող են դրսեւորել այն ազգային-պետական կառույցները, որոնք նպաստում են համագործակցության մշակույթը մարդակենտրոն դարձնելուն եւ մարդկային պոտենցիալի ստեղծագործ կարողությունների դրսեւորման ու իրացման միջոցով զարգանալուն: Ընդօրինակություններն, ինչպես նշվեց, զարգացման հնարավորությունից զրկում են ազգը, իսկ ներկայիս զարգացող աշխարհում զարգացման հնարավորությունները չօգտագործելը հանգեցնում է օտարներից կախվածության եւ մշակութային դիմազրկման: Հետեւաբար, **մշակութային ինքնության պահպանման գործում առանցքային նշանակություն ունի համագործակցության մշակույթի խմբակային բնույթը հասարակականի վերածելու խնդիրը: Դա թույլ կտա Հայաստանում ձեւավորել այնպիսի պայմաններ, երբ մարդանհատի ստեղծագործ կարողությունների իրացումը ներդաշնակվում է հասարակական-պետական համակարգի ու ազգի մշակութային համակարգի զարգացման խնդիրներին, հետեւաբար եւ ազգային ինքնության պահպանումը վեր է ածվում ազգային պետության յուրաքանչյուր անդամի կողմից անձնական կարեւորություն ստացող խնդրի:**

3. Մշակույթի ռացիոնալ եւ իռացիոնալ հատկանիշների հարաբերակցությունը մշակութային ինքնության տեսանկյունից

Ցանկացած ժողովրդի մշակույթ, այդ թվում եւ հայկական են, ունի ինչպես ռացիոնալ, այնպես էլ իռացիոնալ տարրեր: Ժամանակակից աշխարհում, որի մասն են կազմում նաեւ Հայաստանը եւ հայ ժողովուրդը, տիրապետող են զարգացման գործընթացները, հետեւաբար եւ **մշակույթի ռացիոնալ մասը պետք է համարել այն ամենը, որոնք բավարարում են մշակույթը կրող անհատի եւ ժողովրդի զարգացման պահանջմունքները, իսկ իռացիոնալ, որոնք արգելակում են այդ պահանջմունքները եւ խոչընդոտում կամ կասեցնում զարգացումը**: Մշակույթում առկա են նաեւ տարրեր, որոնք չեն արգելակում, սակայն բարենպաստ միջավայր են ձեւավորում զարգացման գործընթացների համար, առանց դրանցում ակտիվ դերակատարության: Նման տարրերը նույնպես պետք է համարել ռացիոնալ մասի բաղադրիչներ: Եթե մշակույթն իր ներքին ռեսուրսներով չի կարողանում բավարարել հանրույթի եւ նրա անդամների զարգացման պահանջմունքները, ապա տվյալ հանրույթը ստիպված է լինում դիմել փոխառությունների կամ ընդօրինակումների: Նման դեպքերում, եթե վերջիններս սկսում են ազդել յուրային եւ օտար տարրերի հարաբերակցության վրա, կարող է առաջանալ մշակութային ինքնության կորստի վտանգ: Այս դեպքում մշակույթի ռացիոնալացումը ստանում է առանցքային նշանակություն մշակութային ինքնության պահպանման գործում:

Ժամանակակից աշխարհում զարգացման գործընթացների հիմքում ընկած է հասարակական համագործակցության նոր հաստատությունների եւ ձեւերի փնտրտուքը: Մասնավորապես, առանցքային կարեւորության գործոնը համարվում է առաջին հերթին մարդկային ներուժի լիարժեք բացահայտման ու դրա իրացման հնարավորությունների կատարելագործումը: Անշուշտ, կարեւոր գործոն է նաեւ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, սակայն եթե նկատի ունենանք, որ զարգացման սուբյեկտը մարդն է եւ նրա ստեղծագործ ակտիվությունը, ապա պետք է ենթադրել, որ **մշակութային ռացիոնալացման հիմքում նույնպես ընկած է այն գաղափարը, որ մարդուն, նրա ստեղծագործ ձգտումների իրացման համար տվյալ մշակութային միջավայրը պետք է տա գերագույն**

արժեքի նշանակություն եւ հետեւաբար, ձեւավորի մարդու ստեղծագործ պահանջմունքի բավարարման համար լիարժեք մշակութային պայմաններ: Այս առումով մարդը եւ նրա ազատությունը կարող են ձեռք բերել մշակութային զարգացման առանցքային գործոնի նշանակություն: Մշակութային տարբեր միջավայրերում այս խնդիրն ունի համապատասխան լուծումներ, սակայն լայն առումով խնդրի լուծման մարդակենտրոն մոտեցումները բնորոշ են եվրոպական մշակութային միջավայրին: Ասիական մշակութային միջավայրը ոչ այնքան մարդակենտրոն է, որքան խմբակենտրոն: Մարդը վերջինիս կողմից դիտվում է իբրև միջոց խմբային ավանդույթները հնարավորինս անփոփոխ պահպանելու համար: Ասիական միջավայրում մարդու ստեղծագործ հակումների իրացումն էլիտար շրջանակների մենաշնորհն է: Ժողովուրդն այս հասարակությունների մեջ գլխավորապես իրականացնում է մշակույթի պարզ վերարտադրությունը, այսինքն՝ դոգմատիկ բնույթ ունեցող ավանդույթների ու ստերեոտիպերի պահպանումը: Հասարակ ժողովրդին ավելի շատ էլիտայի իշխանությունը անփոփոխ կերպով վերարտադրելու գործառույթ է հատկացված: Այստեղ մարդու ստեղծագործ պոտենցիալի բացահայտումը եւ իրացումը դիտվում է որպես վտանգ՝ իշխող վերնախավի դիրքերի թուլացման առումով: Այս առումով պատահական չէ, որ ասիական երկրները հիմնականում կամ՝ հետամնաց են, կամ՝ եթե զարգանում էլ են, ապա բնական ռեսուրսների շահագործման հաշվին: Ասիական այն երկրները, որոնք գտնվում են զարգացման փուլում, հիմնականում ձերբազատվում են իրենց ազգային մշակութային իռացիոնալ հատկանիշներից. փոխարենը ռացիոնալիզացնելով իրենց մշակույթը[16]: Դրա լավագույն օրինակը ճապոնական եւ հյուսիս կորեական փորձն է:

Հարկ է նկատել, որ մշակույթի ռացիոնալ կամ իռացիոնալ բնույթն ուղղակիորեն կապված է նախորդ բաժնում քննարկված համագործակցության մշակույթի խմբային եւ հասարակական տեսանկյունների հետ: Աշխարհի ներկայիս փորձը հուշում է, որ ռացիոնալ մշակութային համակարգերը չեն հանդուրժում խմբակայնությունը եւ դրանցում նույնպես

[16] Այս հարցերին հեղինակն ավելի մանրամասնորեն անդրադարձել է Tadevosyan A. The Place and Perceptions in the European and Asian Civilizations. Their Role in Eurasia in the Establishment of Security and Cooperation, International Forum “Dialogue of Civilizations: New Agenda for Provision of Peace, Security and Cooperation in Eurasia”, Moscow, 2001

մարդու եւ հանրույթի շահերը ներդաշնակված են, քանի որ գերխնդիրը մարդու ստեղծագործաբար իրացվելու պահանջմունքի բավարարումն է կամ մարդու ստեղծագործելու ազատության երաշխավորումը:

Ռացիոնալ մշակութային համակարգում, ինչպես արդեն նկատեցինք, առաջնային խնդիրը մարդու ստեղծագործ կարողությունների իրացման պահանջմունքի բավարարումն է, որին ծառայում են հասարակական բոլոր հաստատությունները, այդ թվում նաեւ պետությունը: Ռացիոնալ մշակութային համակարգերում բացառված է խմբակայնության գերիշխանությունը:

Ինչպես արդեն նշվեց վերը, վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական գործընթացներն էական ազդեցություն են ունեցել մշակույթի եւ դրա վերարտադրման գործընթացների վրա, ինչի հետեւանքով արդի հայ մշակույթում գերիշխող դեր են ստանում խմբակային, ավտորիտար բնույթի տարրերը, որոնք սահմանափակում են ժողովրդի մեծամասնության լիիրավ մասնակցությունը մշակույթի վերարտադրության գործընթացներին: Մյուս կողմիցվերարտադրական գործընթացների վերահսկողությունն իրականացնողները նույնպես դարձել են խմբիշխանական հակումներով բնութագրվող կեղծ էլիտար շրջանակները, որոնց մշակութային պահանջմունքների շրջանակը չափազանց նեղ է՝ նրանց կրթական-գեղագիտական եւ մտավոր ցածր կարողությունների պատճառով: Ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ էլիտար խավն ինքը չի ցուցաբերում ստեղծագործ կարողություններ, գեղագիտական ճաշակ կամ մտավոր ու հոգեւոր բարձր պահանջմունքներ, ինչի հետեւանքով նա ոչ միայն չի առաջադրում այդ պահանջմունքները եւ նպաստում հասարակության մեջ դրա բավարարմանն ուղղված գործընթացների խթանմանը, այլ հակառակը, ունենալով իշխանություն եւ չունենալով զարգացման բավարար մակարդակ, «նոր» կեղծ էլիտան առաջադրում է այլընտրանքային մշակութային պահանջմունքներ, որոնք հիմնականում ունեն ազարտային եւ սպառողական բնույթ, կամ լավագույն դեպքում՝ ժամանցի, որում հիմնական շեշտադրումը նորից դրվում է, ըստ էության, կենսապահովման պահանջմունքների բավարարման վրա: Այսօր էլիտար ժամանցի հիմնական ձեւերը համարվում են ռեստորանային միջավայրում «հաց ուտելը» կամ լավագույն դեպքում «քեֆ անելը», սաունա հաճախելը եւ վարձու կանանց ընկերակցությունը, արտասահման հանգստի մեկ-

նելը եւ նմանատիպ մշակութային ոչ բարձրարժեք բնույթի պահանջմունքների բավարարումը: Վերջին տարիներին մեր կեղծ էլիտայի միջավայրում արմատավորվում է նաեւ որսորդության նկատմամբ իշխանիկական-կալվածատիրական բնույթի հակումներ/հիմնականում կրկնօրինակված արեւմտյան հարուստ շրջանակներից/: Այնպիսի բարձրաժեք պահանջմունքներ, ինչպիսիք են արվեստը, գեղարվեստը, հոգեւոր մշակույթը, երգարվեստն ու պարարվեստը, գրականությունն ու պոեզիան, գիտությունը եւ այլ ստեղծագործ բնույթի պահանջմունքներ, մեր կեղծ էլիտայի համար խորթ եւ ծանձրալի երեւույթներ են: Երգարվեստի պահանջմունքը հիմնականում բավարարվում է հայկականի հետ ընդհանուր շատ քիչ եզրեր ունեցող «ռաբիզ» կոչվող երաժշտությամբ: Ընդհանրապես, ժողովրդի կիրթ եւ մտավոր շրջանակների կարծիքով մեր կեղծ էլիտան նույնպես «ռաբիզ» է: Ըստ մեր ազգագրական նյութերի, նման էլիտար շրջանակներին ընդունված է անվանել «գագոներ» ընդհանուր տերմինով, որը ցուցում է նրանց ճաշակի եւ պահանջմունքների ցածրորակությունը:

էլիտայի ցածրաճաշակությունը եւ պահանջմունքների կենցաղայնությունը մի կողմից եւ միջին դասի /որում հատկապես մտավորականությունը առանցքային կոմպոնենտն է/ բացակայությունը Հայաստանի ներկայիս մշակութային միջավայրը վեր է ածել խմբիշխանական շրջանակների պահանջներին հարմարեցված «փակ» համակարգի, որում բացակայում է ստեղծագործ բարձր կարողությունների դրսեւորման եւ իրացման պահանջարկն ու հնարավորություն ձեւավորող հիմքերը: Մարդիկ, որոնց ստեղծագործական կարողություններն ավելի բարձր են այսօրվա մեր ազգային մշակութային միջավայրում առաջադրվող պահանջմունքներից, իրենց իրացումը չգտնելով ազգային մշակութային միջավայրում, հեռանում են ավելի բարձր մշակութային պահանջմունքներ ձեւավորող միջավայրեր եւ իրենց իրացումը նման միջավայրերում գտնելով՝ իրենց ստեղծագործ ներդրումն անում են այդ մշակույթներում: Մեր մշակութային իռացիոնալիզմի ամենից ակնառու դրսեւորումն այսօր հենց այն է, որ օժտված անհատները չեն կարողանում իրացվել ազգային միջավայրում, քանի որ այդ միջավայրը մշակույթին հաղորդել է խմբակային իռացիոնալ բովանդակություն, ուր գերիշխում է ցածրաճաշակությունը եւ ինչը խեղդում է իրական մշակութային արժեքը եւ դրա նկատմամբ պահանջմունքների առաջադրման հնարավորությունները: Ստացվում է այնպես, որ հայերը հանճարեղ եւ տաղանդավոր ժողովուրդ են, բայց ոչ թե սեփական հայրենիքում եւ հարազատ մշակութային միջավայրում, այլ այնպիսի օտար միջավայրերում, որոնք ձեւավորում են բարձրակարգ եւ բարձրաճաշակ մշակութային պահանջմունքներ:

Ասվածից ամենեւին էլ չի հետեւում, որ մեր հայրենիքում այսօր բացակայում են հասարակական այնպիսի խավեր, որոնք ընդունակ են մշակութային բարձրաճաշակ պահանջարկ ձեւավորել: Ամբողջ խնդիրն այն է, որ իշխանության իռացիոնալ ավտորիտարիզմը, ուղղակիորեն խոչընդոտում է հասարակության մեջ բնականոն աստիճանակարգման գործընթացների կազմակերպմանը, հակադրելով դրան հասարակության աստիճանակարգման իր սկզբունքները, որոնք հիմնականում նորից պայմանավորված են ոչ թե տվյալ մարդու մտավոր ու մասնագիտական կարողությունների աստիճանով, այլ սրա կամ նրա ծանոթ, ընկեր, բարեկամ լինելու հանգամանքով: Իսկ աստիճանակարգման նման մեխանիզմը, որն իր բնույթով նույնպես ավտորիտար է ու խմբակային, չի կարող նպաստել այլ՝ ավելի բարձր մակարդակի մշակույթի զարգացմանն ու տարածմանը: Նկատենք, որ հասարակության աստիճանակարգման մեխանիզմները նույնպես լայն առումով կազմում են ժողովրդական մշակույթի մասը: Եվ եթե մի ժողովուրդը, որը հասարակական ինքնակազմակերպման եւ աստիճանակարգման մշակույթում ունի խմբակայնություն եւ իռացիոնալիզմ, նա չի կարող ունենալ ռացիոնալ եւ ստեղծագործականությամբ աչքի ընկնող մշակույթ ընդհանրապես:

Մշակութային այն իռացիոնալիզմը, որը ներկայումս խոչընդոտող դեր է կատարում մեր զարգացման գործընթացներում եւ ստիպում զարգացման կարողություններով օժտված անհատներին հեռանալ մշակութային ազգային միջավայրից օտար միջավայրեր, չի կարող ապահովել մեր ազգային մշակույթի զարգացումը եւ սեփական մշակութային դեմքի պահպանումը: Ներկայումս Հայաստանում ակտիվորեն ձեւավորվում է խմբակային մշակույթ, որը միգուցե վտանգավոր չհամարվեր ստեղծագործական կարողություններ չունեցող կամ թույլ կարողություններ ունեցող ժողովրդի համար: Սակայն հայերի համար, որոնք մշակութային տեսանկյունից բավականին բարձր աստիճանի հասած ժողովուրդ են, ներկայիս մշակութային իռացիոնալիզմը կարող է ունենալ շատ ավելի բացասական հետեւանքներ, քան թվում է անտարբերության այս իրավիճակում: Խն-

դիրն այն է, որ մշակութային խմբակայնության ու իռացիոնալիզմի միջավայրի ձեւավորումը, եթե ժամանակին դրա դեմ քայլեր չձեռնարկվեն, կարող է որակական բնույթի դեմոգրաֆիկ հետեւանքներ ունենալ:Արդեն ներկայումս առկա են ստեղծագործ կարողություններ ունեցող անհատների մեծ արտահոսքեր, որոնք իրենց ներուժի իրացման միջավայրը գտնում են հայրենիքից դուրս: Սակայն այն հանգամանքը, որ այսօր էլ բնակչության մեջ հատկապես կիրթ եւ մտավորական ընտանիքներում մեծ է երեխաների մշակութային բարձրաճաշակ դաստիարակության իրականացման ասստիճանը, խոսում է այն մասին, որ մեր հայրենիքում մեծանում է մի սերունդ, որը, եթե այստեղ չգտավ իրացվելու պայմաններ, հեռանալու է արտասահման[17]: Իսկ սա նշանակում է, որ խմբիշխանիկների մշակութային պահանջմունքների գերիշխանությունը հասարակության մեջ կարող է խթանել նոր վերարտադրվող մշակութային ներուժի արտագաղթը, քանի որ սրանք, ի տարբերություն իրենց ծնողների, ավելի քիչ կապված կլինեն հայրենիքին եւ ավելի շարժուն կլինեն օտար միջավայրերին ադապտացվելու տեսանկյունից:Դա է վկայում թեկուզ եւ այն, որ ներկայումս աճող սերունդը իր մտավոր եւ մշակութային կարողությունների զարգացմանը զուգընթաց աշխատում է նաեւ այնպիսի առանցքային ադապտատիվ մեխանիզմների մշակման վրա, ինչպիսին համակարգչային հմտությունների եւ օտար լեզուների իմացությունն է: Երիտասարդության շրջանում իրականացված որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ բարձրագույն կրթություն ստացող երիտասարդության մեջ ավելի քան 50 % է կազմում արտագաղթի ցանկություն ունեցողների թիվը[18], որոնց հրապուրում է ոչ միայն արտասահմանի բարեկեցիկ կյանքը, այլեւ առաջին հերթին անհատի ստեղծագործ կարողությունների իրացման համար ձեւավորված պայմանները, ինչը Հայաստանում ձեւավորված խմբիշխանական իռացիոնալ ավտորիտար քաղաքական համակարգի պայմաններում օրըստօրե դառնում է անիրականալի կամ դժվար իրականանալի խնդիր:

[17] Այդ մասին են վկայում նույնիսկ սոցիոլոգիական որոշ հետազոտությունների արդյունքներ՝ Քաղաքացիների իրազեկությունը եւ մասնակցությունը Հայաստանում, Ազգային սոցիոլոգիական հարցում, Երեւան, 2001, էջ 28:

[18] Манукян С. Количественный анализ некоторых этнополитических характеристик студенчества города Еревана, Ереван, 2001, с. 90.

Ինչպե՞ս ռացիոնալիզացնել մշակութային համակարգը. դա հայ ժողովրդի առջեւ կանգնած առաջնային խնդիրներից է ոչ միայն մշակութային հարթությունում, այլեւ ընդհանրապես: Ռացիոնալացման տանող լուծումներից մեկը նախորդ բաժնում բարձրացված հիմնախնդրի կարգավորմանն ուղղված քայլերն են: Այսինքն, այնպիսի մշակութային միջավայրի ձեւավորումը, որն ուղղված է զարգացման խնդիրներին եւ այնպիսի մշակութային միջավայրի ձեւավորմանը, որը կոչված կլինի սպասարկելու ողջ հասարակությանը, այլ ոչ նրա այս կամ այն արտոնյալ խավին: Այս առումով, հատկապես պետությունը պետք է ձեւավորի իր մշակութային քաղաքականությունը, որը Հայաստանում դեռեւս չի ձեւավորված[19]: Խոսքն այն մասին է, որ բացակայում են կառուցողական հայեցակարգերը, դրանցից բխող ծրագրերը եւ ծրագրերի իրականացման մշակութային եւ հասարակական հաստատությունները: Մեխանիկորեն դեռեւս շարունակում են գործել խորհրդային շրջանից պահպանված հին հաստատությունները, որոնցից շատերը կորցրել են մշակութային զարգացում իրականացնողի իրենց գործառույթը: Դա առաջացել է տարբեր պատճառներով: Բայց հիմնական պատճառն այն է, որ նախ, մենք այսօր մշակութային զարգացումը որպես խնդիր չենք ձեւակերպել, եւ երկրորդ, մշակութային ինքնության պահպանումը չենք դիտում ազգային անվտանգության խնդիրների շարքում: Մշակութային զարգացման միջոցով ինքնության պահպանման խնդրի բացակայությունը Հայաստանի նման մոնոէթնիկ պետության մեջ կարող է ձեւավորել այնպիսի ծայրահեղ մոտեցումներ, ինչպիսին մշակութային ներփակվածության ձգտող ազգայնականությունն է, որը լուրջ վտանգ է ներկայացնում Հայաստանի զարգացման համար ընդհանրապես, հետեւաբար եւ՝ վերարտադրվող ինքնիշխան պետության գոյության համար՝ մասնավորապես:

Հայ ժողովրդի առանձնահատկությունն այն է, որ ստեղծագործ մշակութային միջավայրի ձեւավորումը ոչ միայն Հայաստանում բնակվողների, այլ նաեւ Սփյուռքի հայության շահերի շրջանակներում է: Խնդիրն այն է, որ ազգային մշակութային տեսանկյունից շարժընթաց վերարտադրվելու հնարավորությունները Սփյուռքում խիստ սահմանափակ են: Հիմնականում այն պատճառով, որ մշակույթը զարգանալու պայմաններից մեկը

[19] Այս առումով ուշագրավ է՝ Հայկական համապետական մշակութային քաղաքականություն... Ունե՞նք արդյոք, «Տեսակետ» եռամսյա հանդես, Երեւան, 2000, # 3, էջ 18-22:

մշակութային տարածքի առկայությունն է, ինչը չափազանց դժվար է ձեւավորել եւ վերարտադրել այլէթնիկ միջավայրերում: Հետեւաբար, Հայաստանը մշակութային տեսանկյունից ամբողջ աշխարհի հայերի մշակութային վերարտադրության եւ պահանջմունքների բավարարման կենտրոնի դերակատարության խնդիր ունի: Այս առումով Հայաստանում մշակութային ստեղագործաբար վերարտադրության հարցը եւ դրանց դերակատարներին Հայաստանում գործելու հնարավորությունների ձեւավորման հարցը մի կողմից՝ պետական եւ մյուս կողմից՝ ազգային խնդիր է: Խոսքը նրա մասին չէ, որ շեշտադրումը դրվի Հայաստանում ազգային ներփակ մշակութային միջավայրի ձեւավորման վրա: Խոսքն այն մասին է, որ Հայաստանում ձեւավորվեն այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն մշակութային տեսանկյունից գործուն եւ ներուժով օժտված անհատների ստեղծագործական կարողությունների իրացմանը եւ մշակութային արժեքների ձեւավորման վրա ներգործության ուժեղացմանը: Խոսքը նաեւ նրա մասին է, որ Հայաստանում ձեւավորվող մշակույթը հարմարեցվի ոչ թե հասարակության արտոնյալ որեւէ հատվածի կամ խավի սպասարկմանը, այլ մի կողմից՝ ամբողջ հասարակությանն ու ազգին սպասարկելուն, եւ մյուս կողմից՝ համաքայլ ընթանա համամարդկային մշակութային զարգացումներին՝ նպաստելով հայ ժողովրդի մասնակցությանը համամարդկային մշակութային արժեքների ձեւավորմանը:

Նկատի առնելով վերը շարադրվածը, Հայաստանում մշակութային ռացիոնալացումը պահանջում է սկզբունքային հետեւյալ մոտեցումները՝

- լայն հնարավորությունների ձեւավորում՝ ուղղված Հայաստանում ստեղծագործական գործընթացների խթանմանը, ի հակակշիռ ընդօրինակման ու կրկնօրինակման գործընթացների,
- Հայաստանում ապրող բոլոր մարդկանց եւ սփյուռքահայության համար հավասար պայմանների ձեւավորում մշակութային գործընթացներին մասնակցության եւ մշակութային արժեքների օգտագործման հարցում,
- պետության կողմից ազգը մշակույթի շուրջ համախմբող խրախուսական պայմանների ձեւավորում եւ ստեղծագործական մոտեցումների հանդեպ պետական պատվերների համակարգի ձեւավորում,
- մշակութային ֆոնդերի ստեղծման համազգային շարժման ձեւավորում Սփյուռքում եւ Հայաստանում՝ ստեղծագործ անհատներին եւ միավորումներին Հայաստանում ստեղծագործելու հնարավորությունների եւ նյութապես տանելի պայմանների ձեւավորման նպատակով,
- մշակութային պատվերի ձեւավորման կարգավիճակը խմբակային շրջանակներից բարձրաձաշակ ու կոմպետենտ ստեղծագործական խավերին փոխանցում՝ մշակութային պատվեր ձեւավորող կարգավիճակային նոր խմբերի ձեւավորումը պետականորեն խրախուսելու միջոցով,
- մշակութային կյանքի զարգացմանը եւ պրոֆեսիոնալ մշակութային շրջանակների ստեղծագործական պայմանների բարելավմանն ուղղել Հայաստանում առկա ֆինանսատնտեսական կարողությունները,
- մշակույթում ներդրում կատարողների համար խելամիտ հարկային խրախուսական պայմանների ձեւավորում,
- մշակութային ոլորտում հավասար մրցակցային պայմանների ձեւավորում, ստեղծագործական շրջանակների հանդեպ արտոնյալության սկզբունքի կիրառման բացառում:

Եզրափակելով այս բաժինը, կցանկանայինք ուշադրություն հրավիրել այն ընդհանրության հետ, որը բնորոշ է խմբակային մշակույթի եւ մշակույթի իռացիոնալիզմին: Այս միտքն ուղղված է նրան, որ Հայաստանում մշակութային իռացիոնալիզմ ծնող հիմնական պատճառը մշակութային գործընթացներում խմբակային եւ մեխանիկական գործոնների վերջին տարիներին ձեւավորված գերակայությունն է: Խմբակայնություն ծնող պատճառների դեմ պայքարը եւ ստեղծագործականության խրախուսումը, որն, ի դեպ, ճնշվում է խմբակայնության կողմից, մշակութային ինքնության պահպանման հիմնահարցի առանցքային խնդիրներից են:

4. Մշակութային տարածքի պահպանման ու վերարտադրության հիմնահարցը Հայաստանում

Ցանկացած էթնիկ հանրույթ, անկախ նրանից, թե զարգացման ինչպիսի աստիճանում է գտնվում, ունի իր մշակութային տարածքը: Մշակութային տարածքի ձեւավորման դերակատարները մշակույթ կրող մարդիկ են եւ այն հաստատությունները, որոնց միջոցով մարդիկ իրականացնում են իրենց մշակութային հաղորդակցությունն ու վերարտադրությունը:Մշակութային տարածքում սովորաբար գոյություն ունեն կենտրոն եւ ենթակենտրոններ, որոնց շուրջ ձեւավորվում են նաեւ մշակութային տարածքն ամբողջացնող այլ հաստատություններ:Այսպես եթե որպես օրինակ վերցնենք հայկական ավանդական գյուղը, ապա ավանդաբար մշակութային տարածքի կենտրոնը կազմել են գյուղի եկեղեցին, աղբյուրը, դարբնոցը կամ հյուսնոցը: Այս կենտրոնի շուրջ ձեւավորվել է ողջ գյուղի մշակութային տարածքը, որն իր մեջ ներառել է ինչպես բնակարանային համալիրները, այնպես էլ տնտեսական, հասարակական եւ քաղաքական համագործակցության հաստատությունները: Խորհրդային շրջանում գյուղի մշակութային կենտրոնի գործառույթը եկեղեցուց փոխանցվեց մշակույթի տան /պալատի/ կամ ակումբների վրա:Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մշակութային կենտրոնի դերը իր վրա էր վերցրել Երեւանը, ենթակենտրոնների դերակատարությունը իրականացնում էին շրջկենտրոնները: Երեւանում մշակութային կենտրոնի գործառույթը հիմնականում կրում էր ներկայումս Հանրապետության հրապարակ վերանվանված Լենինի հրապարակը: Հետաքրքիր է, որ եթե շրջաններից մարդիկ գալիս էին Երեւան, ապա երգող շատրվաններով գիշերային հրապարակ այցելելը համարվում էր մշակութային հիմնական միջոցառումներից մեկը: Ոչ միայն մայրաքաղաք Երեւանի, այլեւ ողջ հանրապետության մշակութային տարածքի ձեւավորման մեջ հսկայական նշանակություն ունեին թատրոնները, կինոթատրոնները, զբոսայգիները, պուրակները, թանգարանները, հուշահամալիրները, գրադարանները, համերգասրահներն ու դահլիճները, մարզասրահներն ու հրապարակները, հուշարձաններն ու արձանները: Մայրաքաղաք այցելելը, բացի գործնական նպատակներից, յուրաքանչյուր բնակչի համար նաեւ մշակութային ժամանցի կազմակերպում էր: Երեւան քաղաքի մշակութային տարածքի կարեւոր բաղադրիչ էին նաեւ սրճարանները, ցայտաղբյուրները, ճարտարապետական կառույցները, փողոցները, պողոտաները, շենքերը եւ տարածքն ամբողջացնող մնացած կառույցներն ու հաստատությունները[20]:

Անկախության հաստատումը, բնականաբար, պետք է բերեր նաեւ մշակութային տարածքի որոշ ձեւափոխումների՝ այն հասկանալի պատճառներով, որ կարիք էր զգացվում մշակութային տարածքն ազատել խորհրդային շրջանում գաղափարախոսական ճնշման տակ ձեւավորված տարրերից:

Մշակութային տարածքի ձեւափոխման վրա զգալի ազդեցություն ունեցավ նաեւ սեփականաշնորհման գործընթացը, որի հետեւանքով սեփականատերերը, չնայած ձեւական առումով պետական համապատասխան վճիռ կայացնող օղակների գործունեությանը, հիմնականում իրենց հայեցողությամբ էին ձեւափոխում սեփականաշնորհված շենքերի ու հաստատությունների արտաքին տեսքը, որոշում նոր կառուցվելիք շինությունների տեղը եւ ձեւը:

Ինչպես Երեւան քաղաքի, այնպես էլ հանրապետության մյուս քաղաքների մշակութային տարածքի փոփոխությունների վրա զգալի ազդեցություն ունեցան տնտեսական ոլորտի գործընթացները: Հանրապետության անկախացման հատկապես առաջին տարիներին մանր ու միջին առեւտրի տարածումը որոշակիորեն արտահայտվեց նաեւ քաղաքների արտաքին տեսքի վրա: Թերեւս դրա առաջին դրսեւորումները պետք է համարել արդեն 1990-1991 թվականներին, այսպես կոչված, «սեղանիկների» անկանոն եւ տարերային տարածումը, դրանից հետո գյուղատնտեսական ապրանքների փողոցային առեւտուրը: Փողոցային առեւտրի անկանոն տարածումը քաղաքների ողջ տարածքում առանց դրանց մշակութային տարածքի առանձնահատկությունների հաշվառման, սկզբնական շրջանում հանդիպում էր քաղաքացիների բողոքներին: Սակայն, հասարակությունը դրա դեմ պայքարելու փորձի եւ կարողության անբավարարության պայմաններում ընդունեց հանդուրժողական վարք եւ մշակութային տարածքի կանոնակարգված փոխակերպման լուրջ այլընտրանք առաջադրել անընդունակ եղավ: Սեղանիկների տարերային տարածմանը հաջոր-

[20] Երեւանի մշակութային միջավայրի ձեւավորման մասին ուշագրավ կարծիք է հայտնել՝ Лурье С., նշվ. աշխ., էջ 30-33:

դեց նաեւ կրպակների ու խանութների նույնքան տարերային տարածումը: Ընդհանրապես, կարելի է ասել, որ Հայաստանի քաղաքների եւ, հատկապես, մայրաքաղաքի մշակութային տարածքի ձեւափոխումն ընթանում է «ալիքային» ձեւով: Սեղանիկների ալիքին հաջորդեց կրպակների ալիքը, դրանից հետո՝ խանութներինը, ապա՝ խաղատների, գիշերային ակումբների ու ժամանցի այլ նմանատիպ վայրերի ալիքը: Դրանցից յուրաքանչյուրն իր հետքն էր թողնում եւ շարունակում է թողնել քաղաքի մշակութային տարածքի թե՛ արտաքին, թե՛ բովանդակային փոխակերպման վրա:

Եթե գնահատելու լինենք մշակութային տարածքի ինքնաբուխ ձեւավորման ընթացքը, ապա կարելի է ասել, որ այն ունեցել է եւ՛ բացասական, եւ դրական կողմեր: Շատ երեւույթներ դրա հետեւանքով ունեցան բնականոն զարգացում, ինչը դեռեւս մասնակիորեն շարունակվում է: Նման բնականոն զարգացում ունեցավ «վերնիսաժ» կոչվող հաստատության ձեւավորումը, որը սկզբում, դեռեւս խորհրդային շրջանում ձեւավորվեց որպես նկարիչների եւ արվեստագետների ազատ ստեղծագործությունների բացօթյա ցուցահանդես-վաճառք: Այնուհետեւ այնտեղ մուտք գործեցին զարդավաճառներ, գրավաճառներ, հետո՝ մանր առեւտրականներ: Այնուհետեւ «վերնիսաժը» իր սկզբնական ձեւավորման վայրից՝ Մարտիրոս Սարյանի արձանի շրջակայքից տեղափոխվեց Օղակաձեւ զբոսայգու՝ Վարդան Մամիկոնյանի արձանին հարող տարածք: Իսկ հետո նկարիչներն ու քանդակագործները, այսինքն՝ «վերնիսաժի» սկզբնական ձեւավորողները, նորից տեղափոխվեցին Մարտիրոս Սարյանի արձանի շրջակայքը, ուր նրանք ի սկզբանե ձեւավորել էին «վերնիսաժը», իսկ մնացածը, առավելապես գրավաճառները, դեկորատիվ-կիրառական արվեստների ներկայացուցիչները՝ ոսկեգործներ, արծաթագործները, փայտագործները, խեցեգործները հաստատվեցին Օղակաձեւ զբոսայգու նշված հատվածում:Ստացվեց այնպես, որ բնականոն գործընթացների արդյունքում «վերնիսաժը» վերահաստատեց քաղաքի մշակութային տարածքում ունեցած իր դիրքը:Անշուշտ, չի կարելի ասել, որ պետական համապատասխան օղակները ընդհանրապես չէին մասնակցում նման բնականոն գործընթացներին, սակայն նրանց մասնակցությունը հաճախ կրավորական էր, ինչը որոշ դեպքերում դրական հետեւանքներ ունեցավ:Սակայն, կան նաեւ բազմաթիվ դեպքեր, երբ պետական կրավորական մասնակցությունը բացասաբար է անդրադարձել մշակութային տարածքի փոխակերպման վրա: Խոսքը վերաբերում է հատկապես Աբովյան փողոցի մշակութային միջավայրի մասնակի ձեւախեղմանը՝ որոշ խաղատների հայտնվելու պարագայում: Դրանք ոչ՛ բովանդակությամբ եւ ոչ՛ էլ արտաքին ճարտարապետական տեսքով հարիր չէին քաղաքում այդ փողոցի հետ կապվող, առանձին դեպքերում ավելի քան հարյուրամյա պատմությունից եկող քաղաքային ավանդույթներին: Սակայն, միեւնույն ժամանակ Աբովյան փողոցում «Մոսկվա» կինոթատրոնի, «Երեւան» հյուրանոցի նորովի վերագործարկումը նպաստեց մշակութային առումով ֆունկցիոնալ այդ փողոցի դերակատարության պահպանմանը:

Ցանկացած մշակութային տարածքում կան այդ տարածքի ինքնատիպությունը պահպանող առանցքային կառույցներ: Դա վերաբերում է նաեւ հանրապետության քաղաքներին եւ կենտրոնի դերակատարություն իրականացնող մայրաքաղաքին: Երեւանի համար նման դեր /առանցքային կառույցի/ ունեին նրա կինոթատրոնները, թատրոնները, համերգասրահները, պուրակներն ու զբոսայգիները, բուհերը, գիտական հաստատությունները, թանգարանները եւ այլն: Այսօր հպանցիկ դիտարկում անելու դեպքում կարելի է ասել, որ որոշ առումով եւ այն էլ հիմնականում վերջին տարիների վերանորոգումների շնորհիվ, հաջողվել է պահպանել քաղաքի մշակութային տարածքի կենտրոնական մասը: Ի դեպ, խոսքը այն մասին չէ, որ նոր բնույթի հաստատությունների՝ հատկապես սրճարանների տարածումը բացասաբար է ազդել քաղաքի մշակութային տարածքի ամբողջականության վրա: Հակառակը, մի շարք նոր ռեստորաններ եւ սրճարաններ դրականորեն են անդրադարձել քաղաքի մշակութային տարածքի փոխակերպման վրա: Սակայն, բացասական դրսեւորումներ են հատկապես մշակութային նշանակության հաստատությունների տեղում՝ ինչպես, ասենք, Թումանյան փողոցի վրա գտնվող «Ակադեմկնիգա» գրախանութի կամ գեղարվեստի սրահի տեղում խաղատների կառուցումը: Ն մ ա ն օրինակներ շատ կարելի է բերել: Վիճակը առավել անմխիթար է հատկապես Երեւանի ոչ կենտրոնական համայնքներում եւ մարզային քաղաքներում: Խիստ բացասական ազդեցություն է գործում հատկապես մշակութային օջախների /կինոթատրոններ, մշակութային պալատներ, գրադարաններ/ տեղերում խանութների, տոնավաճառների եւ այլ՝ ոչ մշակութային օբյեկտների ձեւավորումը: Դրանից ոչ պակաս բացասական դրսեւո-

ռում է մշակութային օջախների կամ զբոսայգիների հարեւանությամբ փողոցային առեւտրական անկանոն շարքեր առկայությունը:

Մշակութային տարածքի փոխակերպման նման եւ այլ տարերային դրսեւորումների հետեւանքով, վերջին տարիներին լրջորեն խախտվել է մարդկանց մշակութային հարաբերությունների հիմքում ընկած տարածական նախկին կառույցը, իսկ նոր կառույց, որպիսին այդպիսով դեռ չի ձեւավորվել: Խոսքը վերաբերում է նրան, որ նոր մշակութային տարածքի շատ առանցքային կառույցներ չունեն հասարակական նշանակություն եւ, ըստ էության, հասարակության լայն զանգվածների համար դրանք մատչելի չեն: Մշակութային կյանքի կազմակերպման եւ ինքնության վերարտադրման համար մշակութային տարածքի առկայությունն այնքանով է կարեւոր, որ այն այնտեղ բնակվող մարդկանց մոտ ձեւավորում է ամենօրյա շփումների հնարավորություն եւ նույն մշակութային տարածքին կապվածության ու պատկանելության ընդհանրական գիտակցություն:Այս առումով կարեւոր նշանակություն ունի մշակութային տարածքի բաղադրիչների, դրա ձեւավորման դերակատարների եւ դրանից օգտվող շահառուներին վերաբերող խնդիրները:Մշակութային տարածքը Հայաստանում ուներ եւ ունի ինչպես լայն զանգվածներ, այնպես էլ հատկապես առանձին խավերի համար մատչելիության հատկանիշներ:Այսպես, մշակութային մատչելիության տեսանկյունից հասարակական առավել լայն հնարավորություններ ընձեռող հաստատություններից են զբոսայգիները, պուրակները, հուշարձանները, թատրոնները, կինոթատրոնները, գրադարանները, պատկերասրահները, ցուցասրահները, գրախանութները, համերգասրահներն ու մարզասրահները, սրճարաններն ու բարերը: Մի փոքր ավելի խավային բնույթ ունեն խաղատները, ժամանցի, այսպես կոչված, էլիտար միջավայրերը, ռեստորանները եւ այլն:Հայաստանում վերջին տարիների փոխակերպումներն այս տեսանկյունից դիտարկելու դեպքում կարելի է ասել, որ մշակութային տարածքի փոխակերպումները լրջորեն խոչընդոտում են հասարակության մշակութային շփումներին:Նկատենք, որ առաջին հերթին դա ունի սոցիալական պատճառներ:Բնակչության մեծամասնության համար այսօր ֆինանսական տեսանկյունից մատչելի չեն կամ դժվարամատչելի են նորաբաց կինոթատրոնները, բարձրորակ ներկայացումներն ու համերգները, սրճարանները եւ նույնիսկ գրախանութները: Մյուս կողմից, մի շարք զբոսայգիներ

խնամքի եւ կարգ ու կանոնի բացակայության պատճառով այսօր հրապուրիչ չեն որպես զբոսավայրեր: Բարոյական առումով հնամաշ վիճակում են նաեւ Հայաստանի թանգարանների, պատկերասրահների ու ցուցասրահների մեծամասնությունը եւ այդ առումով գրավիչ չեն այցելուների համար:Այսօր Երեւան քաղաքում եզակի զբոսավայրեր կարելի է համարել գրավիչ:Դրանց թվին կարելի է դասել օպերայի հրապարակին հարող տարածքը՝ Կարապի լճի շրջակայքով, Հաղթանակ զբոսայգին եւ Օղակաձեւ զոսայգու առանձին ոչ մեծ հատվածներ:Այնպիսի սրճարաններ, որոնք ժամանակին քաղաքի մտավորականության հավաքատեղին էին, այսօր վերանորգվել եւ կորցրել են իրենց մատչելիությունը լայն մտավորականության համար: Չնայած, այսօր էլ դրանք փորձ է արվում համարել մտավորական եւ էլիտար սրճարաններ, ինչպես, ասենք, «Առագաստ» սրճարանը:Սակայն, անաչառ գնահատման դեպքում կարելի է ասել, որ այնտեղ հավաքվում է ոչ թե մտավորական, այլ հիմնականում պսեւդոմտավորական եւ պսեւդոէլիտար խավը:Պատահական չէ, որ մտավորականության մեծամասնության մոտ «Առագաստ» սրճարանը իր շրջակայքով ստացել է «Երեւանի գյուղամեջ» ֆոլկլորային անվանումը: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ սրճարանները մշակութային տեսանկյունից դրական դերակատարություն չեն ունենում գոնե՝ դրանց մատչելիությունը ունեցող բնակչության համար:

Ետխորհրդային Հայաստանի բնորոշ առանձնահատկություններից մեկը նոր կիսամշակութային «օջախների» ձեւավորումն էր, որոնց մատչելիության հնարավորությունն ունեին սահմանափակ խավեր: Անդրադառնալով վերը բերված «Ակադեմկնիգա» գրախանութի եւ գեղարվեստի սրահի օրինակներին, կարելի է նկատել, որ, եթե դրանք մշակութային համախմբող դեր էին կատարում ոչ միայն Երեւան քաղաքի, այլեւ ողջ հանրապետության բնակչության մտավոր ու գեղագիտական փոխանակային հարաբերություններում, ապա դրանց տեղում հայտնված խաղատները, սպասարկելով սահմանափակ խավերի, չունեն ժամանցի վայրին բնորոշ հասարակական համախմբիչ գործառույթ:Հարկ է նկատել, որ վերջին տարիներին մայրաքաղաքի եւ հանրապետության մշակութային տարածքում հայտնված հաստատությունների մեծամասնությունն իրականացնում է «նոր հայեր» պայմանական անունը ստացած եւ բնակչության խիստ փոքրամասնությունը կազմող մշակութային տեսանկյունից իռացի-

ոնալ դերակատարություն իրականացնող խմբակային բնույթի խավերին, որոնք հասարակության մեջ իրականացնում են ավտորիտար պսեւդոէլիտայի դերակատարություն: Նշված հաստատությունների այդ գործառույթը, ըստ էության, ծառայում է ոչ այնքան հասարակության մշակութային ընդհանրականության ձեւավորմանը, այլ հակառակը, նպաստում է մշակութային տարածքից բնակչության հիմնական մասի օտարմանը: Նույնը կարելի է ասել նաեւ հիմնականում նման խավերին սպասարկող ռեստորանների եւ ժամանցի այլ վայրերի մասին: Խնդիրն այն է, որ նման հաստատությունների ձեւավորումը պետք է արգելակվի, այլ պարզապես այն մասին է խոսքը, որ հասարակական ավելի լայն կարեւորության մշակութային հաստատությունների նկատմամբ ոչ բավարար հոգատարությունը ժողովրդի մոտ խորացնում է այն կարծիքի ձեւավորումը, որ Հայաստանը դադարում է իր բնակչության մեծամասնության համար հարազատ լինելուց, քանի որ խմբակային իռացիոնալ մշակույթ կրող կեղծ էլիտան այն որպես տարածք հարմարեցնում է իր սահմանափակ եւ ցածրաճաշակ մշակութային պահանջմունքներին:

Սա չէինք ցանկանա հնչեցնել, որպես ահազանգ, սակայն կարեւոր է այս խնդրի գիտակցումը մշակութային տարածքի փոխակերպման հարցում պետական մոտեցումների ձեւավորման համար: Պետք է ենթադրել, որ պետական մոտեցման անհրաժեշտությունն այս խնդրում իրոք կա եւ այն հիմնականում մշակութային տարածքի ձեւավորման պետական վերահսկողական գործառույթների հստակեցումն է՝ մշակութային քաղաքականության ռազմավարության տեսանկյունից: Մեր կարծիքով ռազմավարական խնդիր պետք է լինի մշակութային տարածքի ձեւավորման գործում հասարակական ավելի լայն գործառույթ ունեցող հաստատությունների խրախուսումը: Այս առումով կարելի է բերել օրինակելի երեւույթներ, ինչպես վերջին շրջանում Երեւանում վերը նշված երկու կինոթատրոնների վերանորոգումն էր, Աբովյան փողոցում գրադարան-սրճարանի հիմնումը, որոշ զբոսայգիների, մանկական խաղահրապարակների կառուցապատումն ու գործարկումը: Նկատենք, որ նման դրական միտումները հատկապես աշխուժացել են վերջին երկու-երեք տարում:

Մեկ այլ կարեւոր խնդիր է խմբակային բնույթի ժամանցային հաստատություններից քաղաքների կենտրոնների բեռնաթափումը: Վերևում արդեն խոսվել է մշակութային տարածքի համար «կենտրոն» երեւույթի դերակատարության մասին: **Մշակութաբանական տեսանկյունից մշակութային տարածքի կենտրոնը պետք է լիովին մատչելի լինի հասարակության բոլոր խավերին: Դրանք պետք է կազմեն գլխավորապես մշակութային արժեք ունեցող բաղադրիչներ եւ ժամանցային բնույթի բաղադրիչները պետք է ոչ թե գերակայեն մշակութայինին, այլ ունենան ածանցյալ-սպասարկող բնույթ,** ինչպես ասենք սրճարանը կինոթատրոնում, ուր այցելողի նպատակը ոչ թե սրճարանն է, այլ կինոթատրոն հաճախելը:Այսօր, Երեւան քաղաքի կենտրոնը կորցրել է իր գործառույթը, եւ մայրաքաղաքը նման է կենտրոն չունեցող բնակավայրի: Ժամանակ առ ժամանակ հայտնվում են փոփոխական կենտրոններ, ինչպես ասենք օպերայի հրապարակը կամ ներկայիս «Առագաստ» սրճարանը:Սակայն, դրանք մշակութային առումով տարածական կենտրոններ չեն եւ դրա դերը Երեւանի համար կրում է, որպես մայրաքաղաքի ձեւավորման շրջանում կենտրոնի դեր ստացած ներկայիս Հանրապետության հրապարակը:Այս առումով, անհրաժեշտ ուշադրություն է պետք հատկացնել եւ ժամանակակից միջազգային ստանդարտներին մոտեցնել պատմության թանգարանը եւ պատկերասրահը, վերականգնել հրապարակի շատրվանների շուքը, սկզբնականին մոտ ճարտարապետական լուծում տալ Լենինի արձանի դատարկված տեղին: Հրապարակը տնամերձ այգի չէ, որ սուբյեկտիվ ճաշակով ձեւափոխվի: **Հրապարակի մշակութային տարածքի կենտրոնի դերի վերականգնումը լուրջ աշխատանք է պահանջում, եւ դրան պետք է մասնակցեն կոմպետենտ մասնագետներից կազմված աշխատանքային խմբեր:** Այսօր Երեւանի կենտրոնի վերականգնումը, որպես հասարակության մշակութային հաղորդակցման կենտրոնի, առանցքային կարեւորություն ունի ոչ միայն երեւանցիների, ոչ միայն հայաստանցիների, այլեւ չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ այն մշակութային կենտրոնի նշանակություն ունի աշխարհասփյուռ հայության համար:

Ամփոփելով աշխատանքի այս հատվածը, կարելի է անել մի քանի հիմնական եզրակացություններ:

Նախ՝ պետք է ընդունել, որ մշակութային տարածքը հասարակության ու ազգի մշակութային ինքնությունը պայմանավորող կարեւոր տարր է:

Երկրորդ՝ Հայաստանում մշակութային տարածքի փոխակերպումը պետք է ունենա իր ռազմավարությունը, որի նպատակը պետք է լինի Հայաստանի ողջ հասարակության մշակութային ընդհանրականության գի-

տակցության ամրապնդումը:

Երրորդ՝ մշակութային տարածքի փոխակերպումների մեջ որպես հիմնական սկզբունք պետք է ընդունել հասարակական լայն զանգվածների համար մշակութային տարածքը կազմող հաստատությունների մեծամասնության մատչելիության պայմանը:

Չորրորդ՝ Հայաստանի մշակութային տարածքի փոխակերպումների ընթացքում սկզբունքային խնդիր համարել գոյություն ունեցող հանրապետական, ազգային եւ լոկալ մշակութային տարածական կենտրոնների վերականգնումը կամ պահպանումը: Այս առումով առանցքային խնդիր համարել Երեւան քաղաքի կենտրոնի վերականգնումը՝ նկատի ունենալով, որ այն ոչ միայն Հայաստանի հասարակության, այլեւ համայն հայության համար կարող է իրականացնել մշակութային տարածական կենտրոնի դերակատարություն:

Հինգերորդ՝ մշակութային տարածքի փոխակերպումների եւ վերարտադրության գործում պետությունը եւ նրա համապատասխան հաստատությունները պետք է իրականացնեն համակարգող գործառույթ՝ հասարակական այլ հաստատությունների միջոցով ապահովելով հասարակության լայն զանգվածների մասնակցությունը այս ոլորտին առնչվող վճիռների կայացմանը: Կարելի է նույնիսկ հաճախ իրականացնել հասարակական լայն երկխոսություն՝ օգտագործելով ԶԼՄ-ները, նվիրելով հարցի քննարկմանը հոդվածներ, հեռուստահաղորդումներ, ուղիղ եթերում հարցումներ, ներգրավելով հանրության ամենատարբեր, այդ թվում առանցքային՝ պետական եւ մշակութային ոլորտի գործիչների:

5. Մշակութային տեղեկատվական կապերի դերը եւ դրանց կանոնակարգման հիմնահարցը

Մշակույթն ունի համաժամանակյա-հորիզոնական (սինխորոն) եւ տարաժամանակյա-ուղղահայաց (դիախրոն) հաղորդակցական գործառույթներ: Նշված երկու գործառույթների պահպանումը մշակույթում ապահովում է այն կրող հանրույթի վերարտադրությունը: Մշակույթի տարաժամանակյա-ուղղահայաց հաղորդակցական գործառույթի միջոցով իրականացվում է տվյալ էթնոսի կապն անցյալի մշակութային արժեքների հետ: Այսինքն, տարաժամանակյա-ուղղահայաց մշակութային կապերն ապահովում են էթնոսի կողմից սեփական մշակութային ավանդույթների վերարտադրությունը եւ սերնդից սերունդ դրանց փոխանցումը: Այս տիպի կապերի միջոցով էթնոսն իրականացնում է իր պատմական մշակութային ժառանգության պահպանումը եւ այդ հիմքի վրա էթնոմշակութային նոր արժեքների ստեղծումը:

Ինչ վերաբերում է համաժամանակյա-հորիզոնական կապերին, ապա դրանք ապահովում են էթնոսի տարբեր հատվածների միջեւ հաղորդակցումը ժամանակային միեւնույն հարթությունում: Դա թույլ է տալիս ապահովել համաժամանակյա տեղեկատվության շրջանառությունը էթնիկ հանրույթի շրջանակներում եւ կատարում է էթնոհամախմբիչ գործառույթ՝ մշակութային միեւնույն դաշտում: Համաժամանակյա-հորիզոնական կապերի միջոցով է իրականացվում էթնոսի տարբեր հատվածների ու հասարակական, սոցիալ-մասնագիտական շերտերի միջեւ էթնիկ մշակութային ընդհանրության ձեւավորումը[21]: Այն հանրույթներում, որոնցում թույլ են գործում հորիզոնական մշակութային տեղեկատվական կապերը, դրանցում թուլանում են էթնոհամախմբիչ գործընթացները եւ առաջանում է էթնիկ մշակութային ընդհանրականության թուլացում եւ մշակութային հատվածականության խորացում, ծայրահեղ դեպքերում՝ նույնիսկ օտարում:

Այլ կերպ ասած՝ տարաժամանակյա-ուղղահայաց մշակութային տեղեկատվական կապերն ապահովում են էթնոսի տարբեր հատվածների կա-

21 . Մշակութային տեղեկատվական կապերի մեր մոտեցումները փոխառված են հայազգի ազգագրագետ-մշակութաբան Սերգեյ Հարությունովից: Տես՝ Арутюнов А. С., Народы и культуры, М., 1989, с. 17-41.

պը մշակութային անցյալի հետ, իսկ հորիզոնական կապերի միջոցով՝ ներկայի: Մշակույթում համաժամանակյա-հորիզոնական եւ տարաժամանակյա-ուղղահայաց տեղեկատվական կապերի ակտիվությունը ապահովում է այն կրող էթնոսի համախմբումը սեփական մշակույթի շուրջ եւ մշակույթի շարժընթաց վերարտադրության կազմակերպման մեջ էթնոսի անցյալի եւ ներկայի մշակութային ռեսուրսների ներգրավումը: Այս կապերի ակտիվ գործառությունն է պայմանավորում նաեւ տվյալ էթնիկ հանրույթի մշակութային դիմադրողականությունը: Էթնոհամախմբիչ հորիզոնական եւ ուղղահայաց տեղեկատվական կապերի ակտիվության անկումը կարող է թուլացնել տվյալ էթնիկ հանրույթի մշակութային դիմադրողականությունը եւ սպառնալ սեփական մշակութային ներուժի միջոցով մշակութային վերարտադրական գործընթացների կազմակերպմանը:Մշակութային դիմադրողականության թուլացումը կամ կորուստը վտանգավոր է նրանով, որ դա կարող է թույլ տալ օտար մշակութային էքսպանսիայի հնարավորություններ, իսկ դա իր հերթին թուլացնում է ցանկացած տիպի էքսպանսիայի նկատմամբ էթնոսի դիմադրողականությունն ընդհանրապես:Սրա վտանգավորությունն այն է, որ կարող է փոխվել էթնիկ հանրույթի գոյատեւման ռազմավարությունը եւ դրա իրականացման համընդհանուր /այդ թվում նաեւ պետական/ մեխանիզմները կարող են փոխարինվել հատվածային, ընդհուպ մինչեւ անհատական մեխանիզմներով:Այսինքն, արտաքին վտանգներին կամ մրցակցությանը դիմակայելու իրավիճակի առաջացման դեպքում էթնոսը կիրառում է ոչ թե համընդհանուր դիմադրություն կազմակերպելու մեխանիզմներ, այլ նրա /էթնոսի/ առանձին հատվածներն ու անդամները գտնում են մասնավոր բնույթի ելքեր, որը կարող է նաեւ լինել մշակութային տարածքի լքումը: Սա, անշուշտ, ազգային անվտանգության խնդիր է. քանի որ մշակութային դիմադրողականության կորուստը վտանգում է ընդհանրապես իր էթնոմշակութային տարածքում հանրույթի ապրելու հեռանկարը:Այսինքն, կորցնելով մշակութային դիմադրողականությունը, էթնոսը կարող է լքել իր մշակութային տարածքը, քանի որ տարածքի եւ հանրույթի միջեւ թույլ են գործում մշակութային կապերը: Հետեւաբար, մարդիկ սեփական անձնական անվտանգությունը գերադասում են մշակութային տարածքի պահպանման խնդրից եւ դիմելով փախուստի՝ հարմարվում են այլ էթնիկ միջավայրերում:

Հայ ժողովրդի ավանդական մշակույթում տեղեկատվական վերը նշված

երկու տիպի կապերի շրջանառությունը ապահովվում էր հիմնականում ընտանիքում եւ համայնական կառույցներում: Որպես համազգային հաստատություն այդ դերը հիմնականում իր վրա էր վերցրել Հայ Առաքելական եկեղեցին: Նկատենք մի հատկանշական երեւույթ, որ տեղեկատվական կապերի շրջանառությունը վերջին մի քանի հարյուրամյակում իրականացվել է սեփական պետական հաստատության բացակայության պայմաններում: Միայն դարասկզբին հայ իրականությանը հաջողվեց վերակագնել պետական կառույցների գործառությունը, իսկ խորհրդային շրջանում պետությունը՝ որպես ազգային հասարակական հաստատություն իր դերակատարությունը իրականացնում էր մասնակիորեն: Միայն Հայաստանի անկախացումից հետո պետական հաստատությունը լայն հնարավորություններ ստացավ մասնակից դառնալու տեղեկատվական կապերի շրջանառությանը որպես դերակատար:

Տեղեկատվական կապերի շրջանառությունը իրականացվում է բանավոր եւ գրավոր ձեւերով: Նկատենք, որ բանավոր ձեւը հատկապես հատուկ է հասարակական այնպիսի օղակներին, ինչպիսին ընտանիքն է, ազգակցական, դրացիական կառույցները: Խորհրդային շրջանում խիստ տուժեց հայ համայնքը, կորցնելով իր ներքին հաղորդակցությունը եւ կյանքը կազմակերպելու ավանդական մեխանիզմները: Դրան փոխարինեցին խորհրդային ինստիտուտները, որոնք Հայաստանի անկախացումից հետո հիմնականում դուրս մղվեցին համայնական իրականությունից: Ներկայումս հայ համայնքը, որպես հասարակական կառույց, դեռեւս ձեւավորման փուլում է եւ չունի իր ներսում տեղեկատվական կապերի շրջանառության հստակ մեխանիզմներ: Համայնքի ներսում նույնպես գերիշխող են բանավոր բնույթի տեղեկատվական կապերը՝ ինչպես տարաժամանակյա, այնպես էլ համաժամանակյա հարթություններում: Համայնական ինստիտուտներից այսօր առավել գործառական են տեղական ինքնակառավարման մարմինը, փոստային բաժանմունքը եւ դպրոցը: Եկեղեցին, որը նախկինում մեր համայնքներում ունեցել է առանցքային դերակատարություն, այսօր չունի լուրջ դերակատարություն: Նկատենք, որ եթե նախկինում, մինչխորհրդային շրջանում, համարյա բոլոր համայնքներն ունեին իրենց հոգեւոր հովիվները, այսօր դա որպես հաստատություն գյուղերում համարյա բացակայում է: Չեն գործում նաեւ խորհրդային շրջանում մշակութային կյանքի կազմակերպման մեջ կարեւոր դեր խաղացող

մշակույթի տներն ու ակումբները, համարյա կործանման եզրին են հասել գրադարանները:

Հայկական գյուղում այսօր էլ բանավոր տեղեկատվության շրջանառությունը իրականացվում է հիմնականում ընտանիքում, ազգակացական եւ դրացիական կառուցներում եւ ողջ գյուղի մասշտաբով՝ գյուղամիջում:

Ինչ վերաբերում է գրավոր տեղեկատվական կապերին, որոնց իրականացումն ապահովում են թերթերն ու գրականությունը, գյուղերում համարյա բացակայում են: Նկատենք, որ Հայաստանի մարզերում օրվա թերթերը հնարավոր է ձեռք բերել մարզային քաղաքներում միայն: Ինչ վերաբերում է գրականությանը, ապա ինչպես նշվեց, դրա շրջանառությունը կազմակերպող հաստատությունները՝ գրադարանները,ոչ միայն գյուղերում, այլեւ մարզային քաղաքներում փաստացիորեն չեն գործում:

Համահանրապետական բնույթի տեղակատվության հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է, որից օգտվելու փաստացի հնարավորության առումով գյուղական եւ մարզային բնակչությունը բավականին վատ վիճակում է: Եթե Երեւան քաղաքում մատչելի է շուրջ 11 տեղական եւ 4 ռուսական հեռուստաալիք, ապա մարզերից շատերում այդ թիվը հաճախ նվազում է՝ հասնելով 2-3 տեղական եւ 1-2 ռուսական ալիքի:

Տեղեկատվական տեսանկյունից կարեւոր դեր էր խաղում նաեւ ռադիոն, որը, սակայն, գյուղերից շատերում նույնպես այսօր տեխնիկական պատճառներով դարձել է անմատչելի:

Փաստորեն, եթե համեմատելու լինենք Հայաստանի մայրաքաղաքն ու մարզերը, ապա համաժամանակյա-հորիզոնական եւ տարաժամանակյա-ուղղահայաց կապերի շրջանառության առումով լուրջ տարբերություններ կան: Պատահական չէ, որ մշակութային տեսանկյունից այսօր հայկական գյուղի եւ մայրաքաղաքի միջեւ տարբերությունները բավական են: Սա չի կարելի միանշանակ բացասական համարել, մանավանդ որ գյուղի եւ քաղաքի միջեւ այս տարբերությունը, ընդհանրապես, բնորոշ երեւույթ է ոչ միայն հայ իրականությանը: Սակայն, Հայաստանում ձեւավորված իրավիճակն անբնական է այնքանով, որ գյուղերը զրկված են տեղեկատվական կապերի շրջանառության ամենահիմնական հնարավորություններից եւ, եթե ընդհանրացնենք, ապա կարելի է ասել, որ գյուղերում այսօր բանավոր տեղեկատվությունը ավելի հիմնական դեր է խաղում, քան գրավորը եւ էլեկտրոնայինը: Դա ինքնին նորից չէր կարող անհանգստանալու տեղիք

տալ, եթե առկա տեղեկատվական կապերի սահմանափակությունն ապահովեր հայկական գյուղի բնակչության մասնակցությունը հանրապետությունում ընթացող գործընթացներին: Կարելի է ասել, որ այս տեսանկյունից, մասնակի բացառություններով, Հայաստանի գյուղերն ու նույնիսկ մարզային մի շարք քաղաքներ օտարվում են հանրապետությունում ընթացող մշակութային գործընթացներից եւ դրա վրա ազդելու ու իրենց մասնակցությունը բերելու հնարավորություններից:Սա այսօր նպաստում է ձեւավորելու երեւանյան եւ մարզային ենթամշակութային իրավիճակներ, որոնցում հանրապետական մշակութային եւ այլ բնույթի անցուդարձին մասնակից լինելու ցանկությունը ձեւավորում է գյուղերից քաղաք արտահոսքի վտանգավոր միտումներ: Հատկապես հեռավոր գյուղերում այսօր շատ փոքր տոկոս է կազմում երիտասարդությունը: Պատճառը միայն գյուղի տնտեսական դժվարությունները չեն, այլ մշակութային տեսանկյունից գյուղի մեկուսացվածությունը եւ գյուղական կյանքի միօրինակությունը:Մեր ազգագրական հետազոտությունները ցույց են տալիս, որ գյուղական երիտասարդության ժամանցի հիմնական ձեւը այսօր դարձել է «խմելը» եւ մոլախաղերը: Գյուղը մշակութային տեսանկյունից վեր է ածվում անհիրապույր մի միջավայրի, որը որպես մշակութային տարածք դադարում է նրանում ապրող մարդու մշակութային պահանջմունքները բավարարելուց, ինչը նպաստում է հատկապես գյուղական երիտասարդության, որը ձգտում ունի նորույթների եւ ակտիվ ժամանցի, գյուղերից հեռանալուն: Սա լուրջ հիմնահարց է եւ դրա լուծումը տեղեկատվական կապերի ինստիտուցիոնալ հիմքերի բացակայությունն է, որը հանգեցնում է գյուղական եւ մայրաքաղաքային մշակութային իրականության միջեւ անջրպետի խորացմանը: Գյուղական միջավայրում մարդկանց մշակութային կապերից օգտվելու մատչելիության եւ դրանցում մասնակցության հնարավորություններ ձեւավորող հաստատությունների բացակայությունը այսօր մեր մշակութային քաղաքականության հիմնահարցերից է եւ այն պետականորեն համակարգվելու կարիք ունի:

Տեղեկատվական կապերի շրջանառության ոլորտին առնչվող առկա հիմնահարցերից է նաեւ մշակույթի վերարտադրության ոլորտում տեղեկատվական կապերի դերակատարության հիմնահարցը: Հայաստանի Հանրապետությունը մաս է կազմում այսօրվա զարգացող աշխարհին եւ, բնականաբար, տեղեկատվական բաց համակարգի միջոցով ակտիվ փո-

խազդեցությունների մեջ է թե՛ իր մերձակա եւ թե՛ հեռավոր հարեւան ժողովուրդների ու ազգերի հետ: Այդ փոխազդեցությունները վերաբերվում են ինչպես տնտեսական եւ քաղաքական, այնպես էլ դրանց հետ սերտորեն կապված մշակութային ոլորտին: Անկախությանը հաջորդած շրջանը, հատկապես դրա առաջին տարիները, կարելի է բնութագրել որպես Հայաստանի համար օտար նորույթների տարերային ներհոսքի փուլ: Այս փուլում, հատկապես եթե նկատի ունենանք խորհրդային շրջանի արտասահմանյան փոխհարաբերությունների փակ բնույթը, նորույթների ներհոսը իր բուռն ձեւի պատճառով մշակութային առումով դժվար վերահսկելի էր դարձել: Այս փուլին հաջորդած շրջանում, որը համընկնում է 1997-1998 թվականներին, նկատելի է նորույթների նկատմամբ գնահատման նոր դրսեւորումներ: Մասնավորպես, սկսվեց դրանց որակական կողմին ուշադրություն դարձնելը եւ դրանց նկատմամբ ընտրությային մոտեցումը: Հենց այս շրջանում նկատելի է նաեւ նորույթների ձեւավորմանը ներքին ռեսուրսների ուղղորդումը: Դա որոշակի դրսեւորումներ ունեցով նաեւ մշակութային ոլորտում:

Եթե գնահատելու լինենք այս գործընթացները, ապա կարելի է ասել, որ ներկայումս դրանցում նկատելի է ներքին ռեսուրսների օգտագործման միտում, որի լիարժեք դրսեւորմանը խոչընդոտում է վերը նկարագրված իռացիոնալ խմբակայնությունը, ինչին բնորոշ է ոչ այնքան ստեղծագործականությունը, որքան ընդօրինակումն ու կրկնօրինակումը:

Նորույթայնության նշված ալիքը վերաբերում է նաեւ տեղեկատվական կապերի շրջանառությունն իրականացնող մեխանիզմներին: Հայաստանի անկախացման շրջանին բնորոշ նորույթներից էր նաեւ անկախ լրատվամիջոցների քանական եւ որակական աճը: Ներկայումս Հայաստանում առկա են բազմաթիվ անկախ հեռուստաընկերություններ ու ռադիոխմբագրություններ, գրավոր մամուլի տարբեր ձեւեր, գնալով ավելի ու ավելի կարեւոր դերակատություն են ստանում էլեկտրոնային կապի միջոցները: Եթե նկատի ունենանք զարգացման գործընթացներին ինտեգրման կարեւորությունը, ապա դա, անշուշտ, ունի դրական նշանակություն: Սակայն, այս երեւույթները ունեն նաեւ մի լուրջ առանձնահատկություն, որը վերաբերում է տեղեկատվության, այդ թվում նաեւ մշակութային տեղեկատվության շրջանառություն իրականացնելու հատկանիշին: Այս դաշտում տեղ գտած նորույթների առանձնահատկությունը նաեւ այն է, որ դրանք որոշակի փոփոխությունների են ենթարկում ինչպես տարաժամանակյա-ուղղահայաց տեղեկատվության, այնպես էլ համաժամանակյա-հորիզոնական կապերի փոխանակման թե մեխանիզմները եւ թե՛ ինտենսիվության աստիճանը: Խոսքն այն մասին է, որ հատկապես փոխվում են ավանդույթների փոխանցման այն մեխանիզմները, որոնք փոխանցվում էին սերնդից սերունդ եւ վերաբերվում էին հիմնականում լոկալ մշակութային, ընտանեկան, ազգակցական, դրացիական, համայնական, միջանձնային հարաբերությունների մշակույթին:Զանգվածային լրատվամիջոցների դերի մեծացումը ներկայումս լայն հնարավորություններ է ստեղծել ինչպես մշակութային ավանդույթների, այնպես էլ նորույթների համազգայնացման ոլորտ դրանց ներգրավման համար:Այսօր պարզապես նման մոտեցումների եւ խնդիրների ձեւակերպումն է բացակայում, կամ շատ թույլ է արտահայտված:Դրա հետեւանքով ներկայումս զանգվածային լրատվության միջոցները հիմնականում իրականացնում են հորիզոնական տեղեկատվության շրջանառությունը, եւ նրանց դերը մշակութային ավանդույթների, ժառանգության եւ պատմությանն առնչվող տեղեկատվության շրջանառությունն ապահովելու տեսանկյունից շատ թույլ է:Մյուս կողմից էլ ԶԼՄ-ների, հատկապես հեռուստա եւ ռադիո միջոցների մշակութային տեղեկատվությունը առավելապես նպաստում է օտար մշակութային նորույթների շրջանառությանը:Անշուշտ, խոսքն այն մասին չէ, որ ժամանակակից աշխարհի հետ ակտիվ փոխազդեցությունները բացառվեն, այլ պարզապես անհրաժեշտ է նաեւ ազգային մշակութային տեղեկատվության շրջանառության մեջ ԶԼՄ-ների դերի ակտիվացմանն ուղղված քայլերի ու քաղաքականության ձեռնարկումը:Դրանում, անշուշտ, դեր է խաղում այն հանգամանքը, որ ԶԼՄ-ներն այսօր հիմնականում ոչ թե անկախ են եւ նրանց առաջարկը ձեւավորվում է հասարակական լայն պահանջարկի հիման վրա, այլ, որ դրանք գլխավորապես կախված լինելով խմբակային մեխանիկական շրջանակներից գործում են նրանց պատվերի հիման վրա: Սակայն, նույնիսկ այս իրավիճակում ԶԼՄ-ներն ունեն բավականաչափ ազատություն մշակութային տեղեկատվական կապերի շրջանառության մեջ իրականացելու նաեւ ազգային մշակույթի վերարտադրությանը նպաստող գործառույթ: Այս առումով, անշուշտ, պետությունը, որպես օրենքների ձեւավորումը համակարգող մարմին, կարող է ունենալ որոշակի դերակատարություն եւ որպես պատվիրատու ազդել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հե-

ռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների մշակութային դերակատարության վրա: Ուստի, անտեղի չի լինի նկատել, որ պետական համակարգված մոտեցումը տեղեկատվական կապերի շրջանառությունն իրականացնող ոլորտների վրա՝ մշակութային քաղաքականության իր ռազմավարությունից ելնելով, անհրաժեշտություն է:

Եթե ընդհանրացնենք մշակութային տեղեկատվական կապերի դերակատարությանը վերաբերող մեր նկատառումները, ապա կարելի է ասել, որ դրանում առկա խնդիրները հիմնականում վերաբերում են դրանց բովանդակությանը եւ շրջանառությունն ապահովող մեխանիզմներին: Առաջինի առումով առկա են մի քանի հիմնահարցեր, որ զանգվածային լրատվամիջոցների միջոցով իրականացվող շրջանառությունն այսօր կարիք ունի բովադակային լուրջ վերանայումների, քանի որ դրանք հիմնականում ներառում են՝

ա/ օտար մշակութային տարրեր, որոնք գլխավորապես չեն համապատասխանում համամարդկային մշակութային արժեքային չափանիշներին եւ ներկայացնում են արեւմուտքի մշակութային կյանքի ցածրաճաշակ նմուշները: Դրանք հիմնականում չեն ծառայում մշակութային ճաշակի ձեւավորմանը, այլ նպաստում են դեստրուկտիվ կրքերի քարոզմանը: Այս առումով խնդիրներից մեկն **օտար մշակութային նորույթների քարոզչության մեջ համամարդկային մշակութային բարձրաճաշակ ստեղծագործությունների քարոզումն է** եւ հատկապես դաժանությունների, մարդասպանությունների, պատերազմների, սեքսի եւ դեստրուկտիվ կրքերի քարոզչության արգելումը ԶԼՄ-ներում,

բ/ դրանցում առկա են նաեւ տեղական մշակութային փաստերի շրջանառության դրսեւորումներ: Սակայն հարկ է նկատել, որ տեղականը դեռեւս չի կարելի անվանել ազգային մշակութային: Այն, որ ԶԼՄ-ները հիմնականում զբաղված են ցածրաճաշակ խմբակային պահանջմունքներ բավարարող ստեղծագործությունների քարոզմամբ, ոչ միայն չի նպաստում ազգային մշակութային միջավայրի եւ արժեքների քարոզմանը, այլեւ հակառակը, հաճախ նպաստում է դրանց աղավաղմանը եւ խմբակայնացմանը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, երգիծանքի եւ հումորի, երգարվեստի ու պարավեստի, կինոարվեստի ոլորտի ինքնուսների խմբակային «արվեստի» քարոզմանը, որոնց գործունեությունը ոչ միայն չունի մշակութային գործառույթ, այլեւ հակառակը, նպաստում է հակամշակույթի խորացմանը, որն իր քանակական գերակշռությամբ եւ խմբակային մատուցմամբ բովանդակազրկում է ազգային մշակութային կերպերն ու արժեքները:

Ասվածը բնավ չի նշանակում, որ մշակույթը ենթադրում է բացառապես խիստ պրոֆեսիոնալիզմ: Սակայն, գոյություն ունի մշակույթի ու հակամշակույթի սահման, որը գտնվում է մի կողմից մշակութային արժեքի համահասարակական բնույթի ու դրա հոգեւոր լիցքավորման եւ մյուս կողմից՝ խմբակային բնույթի ու դրա հոգեւոր պրոֆանիզացման անթույլատրելիության սահմանագծին: Եթե որպես մշակութային ստեղծագործություն ներկայացվող այս կամ այն ոլորտի գործը խախտում է մշակութային կերպի եւ նրա համահասարակական բովանդակության միջեւ սինխրոն եւ դիախրոն կտրվածքների սեմանտիկ կապը, ապա նման «ստեղծագործությունները» մշակութային այլասերումներ են եւ իրականացնում են համապատասխան գործառույթ: Հենց նման մշակութային փաստերի քարոզչությունն է անթույլատրելի եւ ինչի նկատմամբ պետությունը իր հասարակական, մշակութային եւ օրենսդրական համապատասխան ինստիտուտների միջոցով պետք է իրականացնի կոնստրուկտիվ վերահսկողություն: Եթե պետությունը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների, այդ թվում եւ մշակութային իրավունքների երաշխավոր, ապա կարծում ենք, որ նման կանոնակարգումը մտնում է պետության գործառույթների մեջ:

Տեղեկատվական կապերին առնչվող մեկ այլ կարեւոր հիմնահարց է գյուղի եւ քաղաքի, մարզերի եւ մայրաքաղաքի միջեւ մշակութային ընդհանրության վերը նկարագրված անջրպետման կասեցումը՝ մշակութային տեղեկատվակապերի շրջանառությունը իրականացնող հաստատությունների մատչելիության տարբերությունները նվազագույնի հասցնելու միջոցով: Անհրաժեշտ է տեղեկատվական կապերի շրջանառության ինտենսիվության այնպիսի աստիճանի ձեւավորում, որը թույլ կտա հանրապետության ողջ տարածքում ձեւավորել մշակութային ավանդույթների եւ նորույթների հավասար մատչելիություն, ինչպես նաեւ կստեղծի դրանց ձեւավորման ու վերարտադրության գործում մասնակցության հավասար հնարավորություններ: Տեղեկատվական կապերի շրջանառության ակտիվացման միջոցով հանրապետության բոլոր բնակավայրերում մշակութային տեսանկյունից իրացվելու հավասար հնարավորությունների ձեւավորումը նույնպես անհրաժեշտություն է:

6. Մշակութային քաղաքականության ազգային անվտանգության տեսանկյունները /ամփոփման փոխարեն/

Մշակութային ինքնության պահպանումը հայերի համար ոչ միայն մշակութային խնդիր է, այլեւ առաջին հերթին՝ ազգային ինքնության պահպանման խնդիր: Նկատի ունենալով այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության, որպես անկախ պետականության ձեւավորման հիմքում ընկած է նաեւ հայ ժողովրդի անկախ ապրելու քաղաքական պահանջմունքը, ապա ազգային ինքնության պահպանումը մեր ժողովրդի համար ունի կենսական կարեւորություն: Ազգային ինքնության պահպանումը լավագույնս հնարավոր է իրականացնել պետականության առկայության պայմաններում: Հայ ժողովրդի համար անկախ պետականության իմաստավորումն առաջին հերթին ուղղված է պատմականորեն ձեւավորված մշակութային տարածքում սեփական ազգային ինքնատիպությունը պահպանելուն եւ վերարտադրելուն: Դարեր շարունակ հայերը, չունենալով ազգային պետականություն, կարողացան իրենց պատմական հայրենիքի տարածքում ձեւավորել անկախ պետություն հիմնականում այն պատճառով, որ իրենց բնակեցման տարածքը համապատասխանում էր մշակութային տարածքին, որտեղ պահպանվում եւ վերարտադրվում էր ազգային մշակույթը: Հենց որպես ազգային մշակույթի կրող, հայը տարբերվում է այլ ազգություններից եւ գոյատեւում ու վերարտադրվում է որպես հանրույթ: Մշակութային ինքնության պահպանումն ու վերարտադրությունն ապահովում են հայ ժողովրդի, որպես աշխարհի ժողովուրդների ընտանիքի անդամի գոյությունը եւ իրավունքը: Նույնիսկ, պետությունը հայերի համար չի կատարել ինքնության պահպանման եւ վերարտադրության այնպիսի կարեւոր դերակատարություն, որչափ դրա հնարավորությունը տվել է ազգային մշակույթը: Հետեւաբար, մշակույթային ինքնության պահպանումը հայ ժողովրդի գոյատեւման առանցքային պայմանն է: Այս առումով մշակութային քաղաքականության խնդիրը պետության համար պետք է նշվի որպես առանցքային խնդիր:

Սակայն, անհրաժեշտ է հստակ պահպանել սահմանգիծը մշակութային ինքնության պահպանման եւ մշակութային ինքնամփոփման միջև: Խնդիրն այն է, որ այսօր արեւմտյան մշակութային էքսպանսիաներին դիմակայելու նպատակով շատ արեւելյան ժողովուրդներ, որոնք ունեն մշակույթի վերարտադրության «փակ» եւ դոգմատիկ համակարգեր, ստեղծում են հաղորդակցման արհեստական պատնեշներ եւ արգելքներ ու պահպանում են իրենց մշակութային ինքնությունը ինքնամփոփման միջոցով: Հայ ժողովրդին դիմակայման այդ ձեւը չի կարող հարազատ լինել, քանի որ արդի հայկական մշակույթը առավելապես բաց է եւ ստեղծագործական: Այսինքն, այս հատկանիշները մեր մշակութային վերարտադրության մեխանիզմներին բնորոշ հատկանիշներ են: Հետեւաբար, ազգային մշակույթի պահպանման ու վերարտադրության խնդիրը մեր համար գտնվում է ոչ թե մշակութային ավանդույթայնության խորացմանն ուղղված քաղաքականության մշակման մեզ, այլ վերարտադրության մեխանիզմների ինքնատիպության պահպանման քաղաքականության մշակման մեջ: Վերջինս թույլ կտա մշակութային նորույթների պահանջմունքը բավարարել.

- սեփական մշակութային հենքի վրա նոր նորույթների ձեւավորման միջոցով,
- օտար միջավայրերից նորույթների ընդօրինակման եւ սեփական մշակութային միջավայրում դրանց հարմարեցման միջոցով: Համառոտ սա կարելի է անվանել նորույթների ազգայնացում:

Ընդհանրապես, նորույթների եւ ավանդույթների վերարտադրության նկատմամբ մոտեցումները մշակութային ռազմավարության մեջ, պետք է ստանան իրենց ձեւակերպումները: Մեր կարծիքով, սկզբունքային առումով ռացիոնալ տարբերակ կարող է համարվել այնպիսի ավանդույթների վերարտադրության շեշտադրումը, որոնք ունեն համապետական եւ համազգային ընդգրկունության ենթատեքստ, կամ ավելի պարզ ասած՝ կարող են իրականացնել ազգային եւ պետական ընդհանրականություն ձեւավորելու գործառույթ:

Ինչ վերաբերում է մշակութային նորույթների հիմնահարցին, ապա հայկական մշակույթի ինքնատիպության պահպանումը կախված է նրա ստեղծագործականության պոտենցիալից: Այսօրվա զարգացող աշխարհում մշակութային ինքնատիպության պահպանումը հնարավոր է ստեղծագործական պոտենցիալի լիարժեք դրսեւորման եւ իրացման համար պայմանների ձեւավորմամբ: Սա թույլ կտա ապահովել հայկական մշակույթի զարգացումը ստեղծագործականության հիման վրա, ինչը, ներկա-

յումս, մշակութային զարգացումներում իշխող միտումն է: Այս սկզբունքով ընթացող մշակութային մրցակցության մեջ իրենց կարող են պահպանել այն մշակույթները, որոնք զարգանալու պոտենցիալ են բացահայտում եւ իրացնում: Սա 21-րդ դարի մշակութային անխուսափելի գործընթացների տրամաբանության մեջ հայկական մշակույթի ինքատիպության, այսինքն՝ հայերի ազգային ինքնության պահպանման հիմնական հնարավոր ելքն է:

Ուստի, ազգային մշակույթի ստեղծագործ պոտենցիալի բացահայտման եւ դրսեւորման պայմանների ստեղծումը այսօր մշակութային ոլորտին առնչվող ազգային անվտանգության առաջնային սկզբունքային խնդիրն է: Ոչ թե ազգային արժեքների եւ ավանդույթների անհույս պաշտպանությունն է այսօր առաջնայինը, այլ, մեկ անգամ եւս շեշտում ենք, **սեփական մարդկային ռեսուրսների ստեղծագործական դրսեւորման պայմանների ապահովումը ազգային պետության սահմաններում:**

Մշակույթը ձեւավորում եւ վերարտադրում են մարդիկ: Ուստի, սեփական ազգային մշակութային միջավայրում եւ տարածքում մարդու ստեղծագործական իրացման հիմնահարցը ազգային անվտանգության հիմնահարց է, քանի որ այն զարգացման առաջնային պայմանն է, եւ այսօրվա զարգացող աշխարհում ինքնիշխանությունը պահելու գլխավոր պայմանը: Բանաձեւելով, կարելի է ասվածը ներկայացնել հետեւյալ կերպ՝

. ազգային անվտանգության տեսանկյունից ՀՀ մշակութային քաղաքականության հիմնական սուբյեկտը մարդն է՝ որպես ազգային մշակույթը ստեղծագործաբար վերարտադրող անհատ,

. ազգային անվտանգության տեսանկյունից ՀՀ մշակութային քաղաքականության հիմնական օբյեկտը ազգային մշակույթն է՝ որպես հայ ազգի ինքնության եւ ինքնիշխանության գրավական,

. ազգային անվտանգության տեսանկյունից ՀՀ մշակութային քաղաքականության հիմնական խնդիրը՝ ՀՀ բոլոր քաղաքացիների եւ Սփյուռքի բոլոր ներկայացուցիչների համար Հայաստանում՝ հայ ժողովրդի մշակութային տարածքում մարդու ստեղծագործական մղումների դրսեւորման եւ իրացման հավասար, նպաստավոր ու խրախուսական պայմանների ձեւավորումն է:

Ելնելով աշխատանքում արված վերլուծությունից, կարելի է ասել, որ մշակութային քաղաքականության ռազմավարության հիմքում պետք է դրվի մշակույթի ստորեւ նշվող գործառույթների ապահովումը.

ա/ ինկուլտուրացիայի գործառույթ՝ այս գործառույթի միջոցով ապահովվում է մանուկ հասակում մարդու կողմից տվյալ էթնոմշակութային առանձնահատկությունների յուրացումը /լեզու, նշանային համակարգ, նյութական, սոցիոնորմատիվ, հոգեւոր մշակույթի տարրեր/ եւ հանրույթին պատկանելության գիտակցության ձեւավորումը: Ինկուլտուրացիայի միջոցով մարդը դառնում է տվյալ մշակութային հանրույթի անդամ:

բ/ ադապտատիվ գործառույթ՝ մշակույթի այս գործառույթը թույլ է տալիս օտար նորույթները եւ փոխառությունները հարմարեցնել սեփական մշակութային միջավայրին եւ իրականացնել դրա «ազգայնացումը,

գ/ համախմբող /ինտեգրատիվ/ գործառույթ՝ այս գործառույթն իրականացնում է միեւնույն մշակույթը կրող մարդկանց եւ խմբերի համախմբումը եւ մշակութային նույնականության ու ընդհանրականության գիտակցության ձեւավորումը,

դ/ հաղորդակցային /կոմունիկատիվ/ գործառույթ՝ այս գործառույթը թույլ է տալիս կազմակերպել մշակութային տեղեկատվության փոխանակումը եւ դրանից բխող համագործակցությունը մշակութային մեկ հանրույթի անդամների միջեւ:

Հատկապես հաղորդակցային եւ համախմբման գործառույթների խախտումներն անցանկալի են, քանի որ կարող են նպաստել ըստ տարածքային, սոցիալական, մասնագիտական, դավանաբանական եւ այլ հատկանիշների, ենթամշակույթների ձեւավորման, ինչն էլ իր հերթին կարող է առաջացնել մշակութային հատվածականության անցանկալի իրավիճակ:Այս տեսանկյունից ներկայումս մշակութային քաղաքականության առջեւ ծառացած արդիական խնդիրները կարելի է համարել հետեւյալները:

Հայաստանում համագործակցության մշակույթի ներկայիս խմբակային բնույթի հաղթահարումը եւ դրա հիմքում համազգային եւ պետական ու հասարակական արժեքների ներդրումը:

Մշակույթի վերարտադրության վերահսկողության հնարավորությունների ձեւավորումը՝ դրա իրականացումը կոմպետենտ խավերի եւ շերտերի համար:

Անհատի մշակութային տեսանկյունից ստեղծագործ պահանջմունքները կասեցնող եւ ընդօրինակման պահանջմունքները խրախուսող մշակութային իռացիոնալիզմ ձեւավորող տարրերի վեր հանումն ու հաղթահա-

ռումը: Իռացիոնալ համարել այն մշակութային երեւույթները, որոնք կասեցնում են ստեղծագործականության հատկանիշով պայմանավորված մշակութային վերարտադրության կազմակերպումը:

Հայաստանում բնակվողների եւ սփյուռքահայ մեր հայրենակիցների համար ձեւավորել մարդու ստեղծագործելու պահանջմունքի բավարարման համար լիարժեք մշակութային պայմաններ: Մշակութային կյանքին մասնակցության եւ մշակութային արժեքների ու հաստատությունների մատչելիության հավասար ու նպաստավոր պայմանների ապահովում:

Պետականորեն մշակութային քաղաքականության խնդիր համարել ընդօրինակման եւ կրկնօրինակման, մշակութային գործունեության մեջ արտոնյալության ու խմբակայնության երեւույթների նկատմամբ հակակշիռների ձեւավորումը՝ պետական եւ ազգային արժեքային ենթատեքստ ունեցող ստեղծագործական գործընթացների խթանման միջոցով:

Ազգը մշակույթի շուրջ համախմբող մշակութային արժեքների ձեւավորմանն ուղղված ստեղծագործական մոտեցումների հանդեպ պետական պատվերների համակարգի ձեւավորում: Մշակութային պատվերի ձեւավորման կարգավիճակը խմբակային-իռացիոնալ շրջանակներից կոմպետենտ ստեղծագործական խավերին փոխանցում՝ մշակութային պատվեր ձեւավորող կարգավիճակային նման խմբերի ձեւավորումը պետականորեն խրախուսելու միջոցով:

Ստեղծագործ անհատներին եւ միավորումներին Հայաստանում պահելու, նրանց ստեղծագործելու հնարավորությունների եւ նյութապես տանելի պայմանների ձեւավորման նպատակով պետական նախաձեռնությամբ համազգային շարժման ձեւավորում՝ Հայաստանում ու Սփյուռքում մշակութային ֆոնդերի եւ դրանցում կուտակվող միջոցների անաչառ բաշխման մեխանիզմների ձեւավորման միջոցով:

Մշակել մշակույթի ասպարեզում ֆինանսական ներդրում կատարելու խրախուսական մեխանիզմներ /բարոյական ու նյութական/:

Մշակութային տարածքի հասարակական կարեւորություն ունեցող եւ կոմունիկատիվ, ինտեգրատիվ, ադապտատիվ գործառույթներ իրականացնող կառույցների, հաստատությունների վերականգնում եւ նորերի ձեւավորում: Դրանց մատչելիությունը հասարակական լայն խավերի համար ապահովող մեխանիզմների կիրառում:

Հանրապետության մշակութային տարածքը ամբողջացնող հանրապետական, ազգային եւ լոկալ մշակութային տարածական կենտրոնների վերականգնում եւ պահպանում: Երեւան քաղաքի կենտրոնի, որպես հանրապետական եւ համազգային մշակութային տարածական կենտրոնի վերականգնում:

Մշակութային տարածքի փոխակերպումներում ապահովել հանրության տեղեկատվության թափանցիկության ու մասնակցության համար սկզբունքները՝ ապահովելով հասարակության կարծիքի հաշվառումը մշակութային տարածքի փոխակերպման կամ ձեւավորման ոլորտում վճիռների կայացման մեջ:

ՁԼՄ-ների եւ մշակութային քարոզչության այլ միջոցների նկատմամբ կիրառել ներազդեցության մեխանիզմներ՝ օտար մշակութային նորույթների քարոզչության մեջ համամարդկային մշակութային բարձրաճաշակ ստեղծագործությունների քարոզումն ապահովելու եւ դաժանությունների, պատերազմների, բռնությունների, սպանությունների, տեռորի եւ այլասերում առաջացնող դեստրուկտիվ բնույթի այլ երեւույթների քարոզումը բացառելու նպատակով:

Մշակութային տեղեկատվական կապերի շրջանառության կարգավորմանը նպատակաուղղված պետական ներազդեցության մեխանիզմների մշակում, ինչը թույլ կտա ձեւավորել ներէթնիկ տեղեկատվական կապերի ինտենսիվության այնպիսի աստիճան, որի դեպքում կապահովվի հայաստանյան մշակութային կոմունիկատիվ համակարգում արտաքին տեղեկատվական կապերի դերի եւ աստիճանի ստորակարգումը ազգայինին:

Կատարված հետազոտությունը եւ դրա արդյունքում որպես հետեւություն ներկայացված մշակութային քաղաքականության ռազմավարության առաջարկվող սկզբունքները, սուբյեկտը, օբյեկտը եւ խնդիրները բխում են միջազգային զարգացումներին Հայաստանի ինտեգրման գործընթացներին զուգահեռ մշակութային ինքնությունը պահպանելու հիմնախնդրից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

1.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ 8

2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՄԲԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 24

3. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՌԱՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՌԱՑԻՈՆԱԼ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 33

4. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 42

5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 51

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ /վերջաբանի փոխարեն/ 60

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառացած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, Ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,
- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտություն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,
- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,
- հայկական շարունակականության հայեցակարգը,
- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,
- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,
- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճանաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,
- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,
- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,
- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,
- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,
- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,
- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հագևոր-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրանիկ Մարգարյան - ՀՀ Վարչապետ
Մանուկ Թոփուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ
Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար
Տիգրան Սարգսյան – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ
Արա Ավետիսյան – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝
Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝
Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73
Ֆաքս (374 1) 44-04-73
E-mail: noravank@arminco.com